ԳԱՆՁԱՐ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պաշտոնական թերթ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ է 1998 թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ

1—15 ՀՈՒԼԻՍԻ 1995 թ., № 11 (54)

ԳԻՆԸ՝ 25 ԴՐԱՄ

Այս համարում.

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ ՈՒ ԱԶԳԸ

ԿՅԱ՞ՆՔ՝ ԿՅԱՆՔԻՑ ՀԵՏՈ...

ՄԵՐ ՀԱԶԱՐԱՄՅԱ ԳՐԱԿԱՆ ՈՒՂԻՆ

ՍԵՆՍԱՑԻԱ

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Ինչ կասեր հանուն գաղափարի նահատակված Ս. Հովսեփյանն, երևանյան շենքերի պատերին տեսնելով ընտրական շուրջն մասնակցող իր ցեղակից երևելի ուշիներին։

ՀՈՒԼԻՍԻ 5-ԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՈՒԼԻՍԻ 5-ԻՆ՝ ՀԱՆՐԱՔՎԵ

Դեպի խորհրդարան. ո՞ր մուտքից

Մեկը սրամտորեն ասել է. եթե սովից չմեռնեք, մենք ձեզ կխեղդենք առատության օվկիանոսում: Կարծես թե խեղդվելու ժամանակը եկել է. բայց ոչ թե՝ առատությունից, այլ առատ խոստումներից: Ընտրարշավը մոտեցել է վերջնագծին. ևս մի քանի օր և մեզանից յուրաքանչյուրի դիրքորոշումից, մեր ձայնից, ընտրաթերթիկին կատարած մեր նշումից կախված է այն, թե առաջիկա տարիներին ով է մեր ճակատագիրը տնօրինելու: Իհարկե, հանուն երջմատության պետք է ասել, որ ընտրվող հայոց խորհրդարանը՝ ազգային ժողովը, գործադիր մարմին չէ, այլ օրենսդիր, ուրեմն նա պետք է գրաղվի միայն օրինաստեղծ աշխատանքով: Բայց խախտած ժողովրդավարության և քաղաքակիրթ ազատությունների անսովոր ժողովրդի համար խորհրդարանն ու նրա պատգամավորն ստանում են ազդեցության, արտոնության, անձեռնմխելիության, մի քիչ էլ՝ նյութական ապահովության, օրինական և ոչ օրինական (նաև՝ մաֆիոզ) կառույցների հետ կապերի, կապերից օգտվելու, շահելու, հայտնի և անհայտ գործունեության հնարավորություն: Այստեղից էլ՝ ընտրարշավի անընախադեպ լարված բնույթը: Թեև արդեն ամառ է, բայց եկեք իրերին չնայենք միայն սև կամ գունավոր ակնոցով: Կան և մարդիկ, ովքեր անկեղծ մղումով, ժողովրդի շահը, օրենքն ու օրինականությունը պաշտպանելու նպատակով են ուզում մրցել խորհրդարան և միայն ուզիղ, ազնիվ ճանապարհով, խորհրդարանի կենտրոնական մուտքով: Իսկ մի մասն էլ նախընտրել է ծուռումուռ ճանապարհը, խորհրդարանի ետին մուտքը, ընտրողին թյուրիմացության մեջ գցելու միջոցը: Ցավոք, կա նախորդ ընտրությունների փորձը և այսօր էլ զարմանալ կարելի է, թե օրենսդիր մարմնի ապագա անդամները այդ ո՞ր կախարդական փայտիկով են կատարելու իրենց խոստումները, որոնք շատ հեռու են իրատեսությունից: Որպես կանոն, նախընտրական բոլոր խոստումները վերաբերում են տարածքի ու թաղամասի էլեկտրականության ծավալի մեծացման, գների իջեցման, ավանի, գյուղի բարեկարգման, հարկերի իջեցման, թոշակների ավելացման, ավանդատուների իրավունքների անհապաղ վերականգնման և նման այլ հարցերին: Մեկը հարցնի, թե պարոն կամ քներ թեկնածու, պատմի՛ր, թե ի՞նչ ճանապարհով, ի՞նչ մեխանիզմով ես այդ անելու: Կամ ինչո՞ւ դրանցից մեկը չես իրականացնում մինչև հուլիսի 5-ը: Պատասխանը նույնն է. կրնտրեմ, կտեսնեմ: Այդ ասում են նույնիսկ նրանք, ովքեր արդեն եղել են ընտրված ու մոռացել են, որ ինչ-որ խոստումներ տվել են և այն ժամանակ: Մոռացել են, որ այդպես էլ չօգնեցին խավարի մեջ տառապող շենքերին ու թաղամասերին և չկարողացան սանձել «լույսի մեջ խեղդվող» մաֆիոզ տարրերի բրնակավայրերի նկատմամբ էլբնգավառի բարյացակամությունը:

Հիշում եմ՝ լեցցման տարիներին, լեռնային մի գյուղում մասնակցում էի շրջանային խորհրդի պատգամավորական թեկնածուի առաջադրմանը: Երբ կենտրոնի ներկայացուցիչը հրապարակեց արդեն «ստուգված, համաձայնեցված, արժանի» թեկնածուի ազգանունը, գրասենյակի հողե հատակին նստած մի ծեր մարդ, «Սովետական Հայաստանից» պոկված մի պատառիկով փաթաթված ծխախոտը ձեռքին, բարձրացավ և ձայնեց.

— Նախագահ ջան, ես լէ գուզիմ դեպուտատ...

Բոլորը ծիծաղեցին...

Ցավոք, հիմա չե՛ն ծիծաղում...

«Ես լէ գուզիմ դեպուտատ» արտահայտությունը հիշեցի, երբ լսեցի և տեսա մամուլում հրապարակված թեկնածուների հսկա ցուցակները և արժանավորների կողքին կարդացի մարդկանց անուններ, որոնց ընտրվելու լկտի համարձակությունը կարող է զգուշության կոչել նույնիսկ շատ զգուշավոր, մեղմ, չափավոր մտավորականին: Այդ ինչպե՞ս, հանուն ինչի՞, ո՞ւմ խաբելու գնով, ո՞ր ճանապարհով են ուզում մտնել ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ... ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ:

Նախընտրական պայքարը, որը բավականին լարված էր, նշանավորվեց իշխանամետ ուժերի և ընդդիմության թեժ առճակատմամբ: Այն հանգեցրեց հանրապետությունում գործող ամենամեծ կուսակցության՝ ՀՅԴ-ի և նրա մամուլի գործունեության առկախմանը: Իսկ առճակատումը չթուլացավ, զորացավ... Եվ երբ հասարակության ու ժողովրդի ուշադրությունը կենտրոնացվեց իշխանություն-ընդդիմություն առճակատման վրա, նախընտրական պայքարի օվկիանում չրի երես ելան փոփուրն ու պղպջակները, գլուխ բարձրացրին առևտրավաշխառուական դասակարգի պատրոնները, երեկվա պորտաբույծ տարրերը, որոնք չեն խորշում դեմագոգիայից (դրա մեծ փորձ ունեն), մարդկանց խաբելուց, ահաբեկելուց, կաշառելուց, ընդհուպ՝ «մեկ բաժակ հյուրասիրելով ձայն հավաքելու ամոթալի երևույթից: ՆՐԱՆՑ ԶԵՆՔԸ ՍՈՒՏՆ է, ԴՐՈՇԸ՝ ԴԵՄԱԳՈԳԻԱՆ, ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԱՇԽԻՔԸ՝ ՇԱՏԵՐԻ ԹՇՎԱՌ ՎԻՃԱԿԸ: Նրանք ընտրողներին խաբում են, ահաբեկում կամ լույսով ու առատությամբ ողողված պալատներ խոստանում: Իսկ եթե որևէ մեկը չանում է նրանց հիշեցնել դեռ ոչ հեռավոր իրենց անցյալը, արդարացման համար պատասխանը պատրաստ է.

— բանտարկված եմ եղել՝ կոմունիստական անարդար օրենքների պատճառով...

— գողացել եմ՝ բայց ազգի դավաճաններից՝ բոլշևիկներից...

— համայսարանից հեռացվել եմ... Ինչ է, ուզում եք մարքսիզմ-լենինիզմ ուսումնասիրեի՞...

— յուրացրել եմ պետական միջոցներ. այո՛, բայց ո՞ր պետության՝ սո՛-վե՛տա՛-կա՛ն...

— կաշառով ազատվել եմ բանակից, լավ եմ արել, ուզո՞ւմ էիք ռուսական բանակում ծառայեի...

— պատերազմի տարիներին հաշմանդամի կեղծ թղթր ունեի, քանի որ ֆաշիստները մեզ ազատելու էին կոմունիստական բրոնապետությունից...

Ու անցյալ տասնամյակներ եղել են, իրոք, կոմունիստական տոտալիտարիզմի տարիներ, և շատ անմեղ մարդիկ նաև կալանավորվել են, ոչ ոք չի առարկի, բայց եղել է, չէ՞, ազնիվ մարդը, ազնիվ գործիչը, ազնիվ ուժը, ով այդ ծանր ժամանակ պահել է ազգը, ժողովուրդը, հայրենիքը, քաղաքակրթությունը: Եվ եղել է նաև գո՛ղը, անազնի՛վը, պորտաբո՛ւյծն ու դասալի՛քը:

Երբ անցյալ ընտրությունների ժամանակ մասնակցում էի մի ընտրատարածքում թեկնածուների և ընտրողների հանդիպմանը, թեկնածուներից մեկի ելույթը ընդհատվում էր ծափերով, հետո ելույթ ունեցավ վերնշված դասակարգի ներկայացուցիչ-թեկնածուն և ասաց.

— Բա որ գիշերը ձեր կանալիզացան գասառենի բլնի, ո՞վ է մարելու՝ ե՞ս, թե ձեր երևանցի թեկնածուն...

Մտածեց դահլիճն ու որոշեց. դո՛ւ... Ու անեկդոտը տարածվեց ընտրատարածքում. երևանցի թեկնածուն ծափեր է հավաքում, տեղացին՝ ձայներ: Զերբազատվա՞ծ ենք, արդյոք, նման գայթակղություններից, իմաստնացա՞ել է, արդյոք, մեր ընտրողն ու ձայնը կտա «գասառենի մարդոցերի՞ն», թե ազգի ցավով ապրող քաղաքական գործիչներին, պարզ կդառնա հուլիսի 6-ին... Ի դեպ, հետաքրքիր զուգադիպություն. 1918 թվականի հուլիսի 6-ին բոլշևիկները Պետերում շատ պատահական հաղթանակ տարան, կայանավորելով համագումարի բոլոր էսէռական պատգամավորներին: Այդ օրը վերջացավ պրոլետարական դեմոկրատիան և սկսվեց բոլշևիզմի «ուժային դեմոկրատիան», այսինքն՝ դիկտատուրան: Ո՞ր ճանապարհը կընտրի հայոց ընտրությունը, փոխ դեմոկրատիան... Այն մեծապես կախված է ժողովրդից:

Համաշխարհային պատմությունն ապացուցել է, որ կուսակցություններն ստեղծվում են այն նպատակով, որ ապահովեն առավել նրպաստավոր պայմաններ առաջընթացի, զարգացման, ժողովրդի բարեկեցության համար: Բնական հասարակարգում նրանք կարող են հանգիստ, առանց առնակատումների, թշնամանքի հաջորդաբար փոխարինել միմյանց: Սոցիալիստները ու պահպանողականները հաճախ են մեկը մյուսին գիջում իշխանությունը Ֆրանսիայում, Սկանդինավյան երկրներում, Անգլիայում, Գերմանիայում: Բայց ամենը մեկն առավել ազգանպաստ միջոցառումներից բացի չի փոխում երկրի հիմնական ուղղությունը:

Հիշենք, թե մեր խորհրդարանում քանի՞-քանի՞ բուռն վեճերի, փոխադարձ մերկացումների, վիրավորանքների, հայհոյանքների առիթ է տվել որևէ օրենքի մեջ բառի կամ ձևակերպման, երբեմն խիստ երկրորդական մի օրինագծի ճակատագիրը:

Թողած նորաստեղծ պետության, ծանր վիճակի մեջ տառապող ժողովրդի առավել կենսական, հրատապ խնդիրները՝ օրինախախտումները, պաշտոնական դիրքի չարաշահումը (որը բնորոշ է նոր ստեղծվող ցանկացած իշխանությանը), գների մենաշնորհը, ազգային արժեքների և մրտի արտահոսքը կանխող օրինագծերի ընդունումը, երբեմն ընտրյալներն օրեր են կորցրել այնպիսի խնդրի վրա, որը որպես շռայլություն կարող է դիտվել նույնիսկ ապահով, հարուստ, դեմոկրատիայի բազմամյա փորձ ունեցող մի պետությունում:

Վերջերս առանձին կուսակցություններ մամուլի էջերում հաճախ են անդրադառնում «ժողովրդի պասսիվության» հարցերին: Իհարկե, հայ ժողովուրդը նրման չէ 1988-ի ժողովրդին: Բայց այն ժամանակ կար մեկ թշնամի, մեկ նպատակ և մեկ կամ մի քանի լիդերներ: Այսօր՝ խառնիխուռն են նպատակները, բազմաթիվ՝ կուսակցությունները, իսկ ամենակարևորը՝ լիդերներ համարյա չկան: Ոդածները (իրավունք եմ ինձ վերապահում ասելու՝ նախկին) միմյանց մեղադրելով, վարկաբեկելով դադարեցին լիդեր լինելուց ու... կտարվեց ամենացավալին, ամենաանսպասելին: Կուսակցական մեր գործիչները չուսումնասիրեցին մեր բազմադարյա պատմության փորձը, չնանչեցին խորությամբ մեր ժողովրդին: Զիմացան, որ հայերս անձնապաշտներ ենք, մենք գնում ենք հերոսի հետևից, լիդերի հետևից: Իսկ մեր բազմաթիվ (և շարունակ բազմացող) կուսակցությունները իրենք անգամ չունեն լիդերներ, ո՞ւմ հավատան, ո՞ւմ հետևից գնան զանգվածները:

Ինչպես հավատա ժողովուրդը՝ ճանաչապետության ու միությունների լիդերներին, երբ մի մասը հանրահավաքում իշխանության դեկին կանգնածների հասցեին «հրապարակում է մերկացնող, դատապարտող, բրեական մեղադրանքներ», իսկ իշխանության դեկին կանգնածները՝ մամուլի ու հեռուստատեսության միջոցով մերկացնում են «հակակազգային, հակաժողովրդային, բազմաթիվ կեղտերի մեջ թաղված» ընդդիմությանը: Ո՞ւմ հավատալ, նայում ես աջ՝ «բրեականներ» են, նայում ես ձախ՝ դարձյալ «բրեականներ» են...

Ստացվում է, որ սեփական դեմքը, սեփական քաղաքական վարկը ժողովրդի աչքին բարձրացնելու նրպատակով, մենք ընտրել ենք միայն դիմացինին ցեխոտելու սխալ, պատմության կողմից դատապարտված ճանապարհը: Այս ճանգամանքը հաշվի չառնել, կնշանակի կորցնել և՛ ընտրողին, և՛ ժողովրդին: Թեև տասնամյակներ առաջ արդեն օգտագործել եմ այս օրինակը, բայց ափիբ կարևոր է, օրինակը՝ տիպական: Մի յուրահատուկ «հասարակություն է» մեղվափեթակը: Մայր, աշխատավոր մեղուներ, բոռեր, պայքար նրանց միջև: Երբ երկու մայր է լինում մեղվաընտանիքում, խմբերի են բաժանվում մեղուները, իրար կոտորում կամ տնից վռնդում են թույլ մորը և նրա կողմնակիցներին: Նույն կոտորածն ու արտագաղթն սկսվում է փեթակում մոր բացակայության ժամանակ: Խելացի մեղուները, եթե ունեն հնարավորություն, նոր մայր են ստեղծում և համախմբվում նրա շուրջը, իսկ եթե ոչ՝ խելացի մեղվապահն է նրանց նոր մայր նվիրում ու տիրում է խաղաղություն:

Մարդկային հասարակությունը շատ հեռու չէ «մեղվի հասարակությունից»: Մենք էլ բնության մի մասն ենք ու ապրում ենք բնական օրենքներով: Ամեն անգամ, երբ անտեսում ենք այդ, հայտնվում ենք ոչ բրնական իրավիճակներում: Հիշենք մեր պատմությունը. ո՞ւր են դիմացկուն ու հերոս հայ զանգվածները, ո՞ւր են նրանց միությունները ու շարժումները, կազմակերպությունները, պայքարները: Պատմությունը հիշում է միայն մեր ժողովրդի լիդերներին, ում պաշտել է նա, հավատացել. Տիգրան Մեծ, Մեսրոպ Մաշտոց, Վարդան Մամիկոնյան, Խրիմյան Հայրիկ, Անդրանիկ, Գարեգին Նժդեհ, Բաղրամյան...

Մենք ընտրության շեմին ենք. մոռանանք թշնամանքը, մեծ ու փոքր վիրավորանքները ու շահերը, շռայլ խոստումները ու ռեալ փոքրիկ «նվիրատվությունները»: Այն տանք նրան, ով կարող է անտեսել իր բարեկեցությունը և նվիրվել Հայոց անկախ պետականությանը, ծառայել ազատ, հպարտ, ապագային պայծառ հույսով սպասող հայ ազգին:

Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Նախագահությունը քննարկեց...
Գիտության ինտեգրացման հորիզոնները

Նախկին Խորհրդային Միության փլուզումից հետո, վրտանգավոր մեկուսացման մեջ ընկավ գիտությունը: Պատճառը հայտնի է, առանց գիտական համագործակցության, փոխադարձ տեղեկատվության և օգնության հնարավոր չէ պատկերացնել գիտության զարգացումը: Ստացվեց այնպես, որ երբ ամբողջ աշխարհում և հատկապես Եվրոպայում ու Հյուսիսային Ամերիկայում առկա են միաձուլման, ինտեգրացիոն գործընթացներ, մեր հանրապետությունները բաժանվեցին, մեկուսացվեցին, կորցրեցին շատ արժեքավոր նրվաճումներ: Ինչպե՞ս վերականգնել համագործակցությունը գիտության բնագավառում: Այդ խնդրով է զբաղվում ԱՊՀ երկրների գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիան (ԳԱՄԱ):

ՀՀ ԳԱԱ նախագահությունը նշում է, որ գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (ԳԱՄԱ) խորհուրդը 1995 թ. մայիսի 28—31-ը Մինսկում կայացած իր նիստում, որի աշխատանքներին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը և ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանը, լսեց ԳԱՄԱ-ի պրեզիդենտ, ակադեմիկոս Բ. Ե. Պատոնի ինֆորմացիան, ԳԱՄԱ-ի 1994-1995 թթ. աշխատանքների արդյունքների և 1995—1996 թթ. գործունեության հիմնական ուղղությունների մասին, ԳԱՄԱ-ի փոխպրեզիդենտ, Բելառուսի ԳԱ-ի պրեզիդենտ, ակադեմիկոս Լ. Մ. Սուշչենյայի զեկուցումը հիմնարար գիտության վիճակի ու հեռանկարի և ԳԱՄԱ-ի շրջանակներում միասնական գիտական տարածքի ստեղծման մասին, ԳԱՄԱ-ի անդամ գիտությունների ակադեմիաների պատվիրակությունների ղեկավարների ելույթները, ԳԱՄԱ-ի կոմիտեների նախագահների հաղորդումները:

Խորհուրդը քննարկեց և հավանություն տվեց հաշվետու տարվա ԳԱՄԱ-ի գործունեության արդյունքներին, ի գիտություն ընդունեց ակադեմիկոս Լ. Մ. Սուշչենյայի զեկուցումը:

Խորհուրդը հաստատեց ասոցիացիայի 1995—1996 թթ. գործունեության հետևյալ հիմնական ուղղությունները.

— ԳԱՄԱ-ի շրջանակներում միասնական գիտական տարածքի ստեղծում,

— ԳԱՄԱ-ի անդամ ակադեմիաների գիտատեխնիկական համագործակցության հնարավոր առավելագույն ծավալներին հասնելու ուղղությամբ համաձայնեցված միջոցառումների իրականացման կարգավորող մեխանիզմի մշակում,

— էկոլոգիայի, տիեզերքի, բարձր էներգիաների ֆիզիկայի, էներգաապահովման բնագավառներում, հզակի գիտական սարքավորման համատեղ օգտագործման, ինչպես նաև գիտության և տեխնիկայի մի շարք այլ ոլորտներում համատեղ գիտական հետազոտությունների ծրագրերի մշակում,

Ի զարգացումն ԳԱՄԱ-ի շրջանակներում միասնական գիտական տարածքի վերստեղծման մասին առաջարկությանը, խորհուրդը իր որոշմամբ նպատակահարմար գտավ նախապատրաստել ԳԱՄԱ-ի խորհրդի դիմում՝ ուղղված ԱՊՀ երկրների պետությունների և կառավարությունների ղեկավարներին, ինչպես նաև, որպես ԳԱՄԱ-ի դիմումի հավելված, նախապատրաստել համաձայնագրի նախագիծ՝ ԱՊՀ պետությունների ընդհանուր գիտական տարածքի ստեղծման մասին: Այդ կապակցությամբ ԳԱՄԱ-ի անդամ գիտությունների ակադեմիաներին առաջարկվեց առաջարկություններ նախապատրաստել ԱՊՀ մասնակից պետությունների ընդհանուր գիտական տարածքի ստեղծման մասին համաձայնագրի վերաբերյալ և մեկ շաբաթվա ընթացքում դրանք ներկայացնել Բելառուսի, Ռուսաստանի և Ուկրաինայի գիտությունների ակադեմիաներին՝ աշխատանքային խմբի կողմից ԳԱՄԱ-ի դիմումի և համաձայնագրի նախագծի նախապատրաստման նպատակով: ԳԱՄԱ-ի դիմումը և ԱՊՀ երկրների ընդհանուր գիտական տարածքի երկրների մասին համաձայնագրի նախագիծը մինչև սույն թվականի հուլիսի 20-ը պետք է ուղարկվի ԱՊՀ պետությունների բոլոր ղեկավարներին:

ԳԱՄԱ-ի խորհրդի կողմից որոշում ընդունվեց Անկախ պետությունների համագործակցության կայուն զարգացման ապահովման արրոբլեմների ԳԱՄԱ-ի կոմիտե ստեղծելու մասին:

Խորհրդի կողմից ընդունվեցին հետևյալ որոշումները.

— ԳԱՄԱ-ի անդամների միջև ոչ տարադրամային համարժեք հիմունքներով գիտնականների, փորձնակ-հետազոտողների և ասպիրանտների կանոնավոր փոխանակման կազմակերպման մասին,

— ԳԱՄԱ-ի անդամ գիտությունների ակադեմիաների աշխատակիցների դիպլոմների նոստրիֆիկացման մասին:

Բոլոր ակադեմիաներին առաջարկվեց ճանաչելու ԳԱՄԱ-ի անդամ ակադեմիաների պետությունների ատեստացիոն օրգանների կողմից անցկացվող գիտական աստիճանների շնորհման մասին դիպլոմների նոստրիֆիկացման արդյունքները:

ԳԱՄԱ-ի խորհուրդը հավանություն տվեց Ռուսաստանի ԳԱ-ի առաջարկությանը՝ Սանկտ Պետերբուրգի Մ. Ֆ. Իոֆֆեի անվան ֆիզիկատեխնիկական ինստիտուտի հիման վրա միջազգային գիտական կենտրոն ստեղծելու մասին,

— Ուկրաինայի ԳԱԱ-ի առաջարկությանը «Ե. Օ. Պատոնի անվան ԷՋԻ» ՄԳՏԿ-ի հիման վրա զոդման և կից տեխնոլոգիաների միջազգային գիտատեխնիկական կենտրոն ստեղծելու մասին: Այդ կապակցությամբ ԳԱՄԱ-ի անդամ գիտությունների ակադեմիաներին առաջարկվեց իրենց երկրներում անհրաժեշտ աշխատանքներ ծավալել, որպեսզի այդ երկրների կառավարություններն աջակցեն սույն առաջարկություններին, այդ թվում նաև ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստում դրանց քննարկման ընթացքում:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշում է՝

Ընդունել ի գիտություն ԳԱՄԱ-ի խորհրդի 1995 թ. մայիսի 28—31-ի որոշումները:

Առաջարկություններ նախապատրաստել Բելառուսի, Ռուսաստանի և Ուկրաինայի ակադեմիաների համար ԱՊՀ մասնակից պետությունների ընդհանուր գիտական տարածքի ստեղծման համաձայնագրի վերաբերյալ,

Լրացավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ Սպարտակ Հովհաննիսյանի ծննդյան 70-տարին և ԳԱԱ թղթակից-անդամ Վլադիմիր Սարգսյանի ծննդյան 60-ամյակը:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունում հանդիսավորությամբ նշվեց մեծավաստակ գիտնականների հոբելյանները:

Ջերմորեն շնորհավորելով Սպարտակ Հովհաննիսյանին՝ ծննդյան յոթանասունամյակի և Վլադիմիր Սարգսյանին՝ ծննդյան վաթսունամյակի կապակցությամբ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը հոբելյարներին հղեց ողջույնի ուղերձներ.

ՄԵԾԱՐԳՈ ՍՊԱՐՏԱԿ ՍԱՐԻԲԵԿԻ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը և բնական գիտությունների բաժանմունքը ի սրտե ողջունում են Ձեր՝ ճանաչված գիտնականի և գիտության անխոնջ մշակի 70-ամյակն ու գիտամանկավարժական գործունեության 40 տարին:

Գիտական լայն շրջաններում Ձեզ գիտեն որպես Հայաստանում գիտության նոր ճյուղերի՝ մոլեկուլային կենսաբանության, մոլեկուլային կենսաֆիզիկայի հիմնադիրներից մեկին: Հատկապես մեծ է Ձեր ներդրումը մոլեկուլային և բջջային սրտաբանության զարգացման գործում, որը լայն ընդունելության է արժանացել միջազգային գիտական հասարակայնության կողմից:

Ներկայումս իր հաստատումն է ստացել ախտաբանական պայմաններում սրտամկանի ֆենոտիպային ձևափոխման վերաբերյալ ձեր կողմից առաջարկված տեսակետը:

Հայ գիտնականների շարքում Դուք առաջինը զգալի ներդրում կատարեցիք տիեզերական կենսաբանության և բժշկության ասպարեզում՝ նպաստելով այդ կարևոր գիտական ուղղության զարգացմանը:

Գիտական պրպտումներին զուգընթաց, դեռևս 1960-ական թվականներից Դուք ակտիվ մասնակցություն եք ունեցել Երևանի պետական համալսարանում մոլեկուլային կենսաբանության և կենսաֆիզիկայի առարկաների դասավանդումը կազմակերպելու գործում:

Ձեր ուսանողներից և աշակերտներից շատերը գիտության դոկտորներ և թեկնածուներ են: Լինելով լայն մտահորիզոնի և ընդգրկուն գիտելիքների տեր, Դուք վայելում եք գիտական հասարակայնության սերը և համակրանքը:

ՄԵԾԱՐԳՈ ՎԼԱԴԻՄԻՐ ՍԱՐԳՍԻ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքը ջերմորեն շնորհավորում են Ձեզ՝ Ձեր ծննդյան 60-ամյակի և գիտամանկավարժական գործունեության 35-ամյակի առթիվ:

Լինելով ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, մի շարք միջազգային գիտական կազմակերպությունների անդամ, Դուք հայտնի եք որպես ականավոր գիտնական, փորձառու մանկավարժ և երիտասարդ գիտնականների հմուտ գիտական ղեկավար: Դուք անսահման նվիրվել ու անմնացորդ ծառայել եք գիտությանը և կրթությանը:

Մեծ է Ձեր վաստակը մեխանիկայի գիտության զարգացման գործում: Հոծ միջավայրի մեխանիկայի արդի կարևորագույն հարցերին նվիրված Ձեր գիտական աշխատություններն արժանացել են լայն ճանաչման՝ ինչպես հայրենիքում, այնպես էլ արտասահմանում:

Դուք ստեղծել եք նոր մեթոդներ այնպիսի կարևորագույն հիմնախնդիրների ուսումնասիրման համար, ինչպիսիք են՝ համասեռ և անհամասեռ անիզոտրոպ առաձգական մարմինների ոլորումը, ծռումը և հարթ խնդիրները, անիզոտրոպիայի և անհամասեռության ազդեցությունը տարբեր բնույթի անցքեր ունեցող առաձգական մարմինների լարվածային վիճակի վրա, համասեռ և անհամասեռ անիզոտրոպ սալերի և թաղանթների ծռումը, ոչ օրթոտրոպ սալերում ջերմային լարումների որոշումը, կառույցների օպտիմալ նախագծման խնդիրները և այլն: Ձեր և Ձեր աշակերտների կողմից ստացված են էական արդյունքներ դեֆորմացվող մարմինների կոնտակտային խնդիրների հետազոտման բնագավառում: Նշված արդյունքները հրատարակված են Ձեր մոտ 300 գիտական հոդվածներում և 10-ից ավելի մենագրություններում:

Մեծարգո Վլադիմիր Սարգսի, Դուք երկար տարիներ ղեկավարում եք պետական համալսարանի հոծ միջավայրի մեխանիկայի ամբիոնը և գիտական աստիճան շնորհող մասնագիտացված խորհուրդը, տեսական և կիրառական մեխանիկայի Ռուսաստանի ազգային կոմիտեի, Սլովակիայի գիտությունների ակադեմիայի մեխանիկների ընկերության պատվավոր անդամ եք:

Սիրելի Վլադիմիր Սարգսի: Շնորհավորելով Ձեր հոբելյանը, մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, ստեղծագործական նոր հաջողություններ:

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Վերջին ժամանակներս Հայաստանում լայն թափ են ստացել էներգետիկայի նոր, էժան և արդյունավետ միջոցների որոնումները: Հանրապետության տնտեսության համար կենսականորեն անհրաժեշտ, Հայաստանն էներգետիկ ճգնաժամից դուրս բերելու խնդիրներին էր նվիրված օրերս գիտությունների ազգային ակադեմիայում գումարված «Միջուկային էներգետիկայի հեռանկարները Հայաստանում» թեմայով գիտաժողովը:

Գիտաժողովի անցկացումը նախաձեռնել էին ֆիզիկոսների հայկական ընկերությունը և ԳԱԱ ՖՄՏԳԲ-ի ֆիզիկայի և աստղաֆիզիկայի գիտական պրոբլեմային խորհուրդը:

Գիտաժողովի աշխատանքները բացեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը: ԳԱԱ թղթակից-անդամ Ռոբերտ Ավագյանի ներածական խոսքից հետո գիտաժողովը լսեց հետևյալ զեկուցումները՝ «Միջուկային էներգետիկայի գիտական հեռանկարները Հայաստանում» (զեկ.՝ պրոֆ. Ա. Ամատունի), «Արագացուցիչներ միջուկային ռեակտորների նոր սերնդի համար» (զեկ.՝ տեխնիկական գիտությունների դոկտոր Ա. Թումանյան), «Փնջային ռեակտորների համար միջուկային ֆիզիկայի հետազոտություններ» (զեկ.՝ պրոֆ. Ա. Խուդավերդյան), «Հայկական ատոմակայանի արդի վիճակը» (զեկ.՝ Հայկական ատոմակայանի փոխտնօրեն Ս. Դանիելյան):

Այնուհետև ծավալվեց մտքերի աշխույժ և օգտակար փոխանակություն, որին մասնակցեցին ակադեմիկոս Միքայել Տեր-Միքայելյանը, ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, գիտ. դոկտոր Ռուբեն Մկրտչյանը, էներգետիկայի նախարարության գիտական բաժնի վարիչ Արեգ Գալստյանը, Արտակարգ իրավիճակների վարչության պետ Ստեփան Բադալյանը և ուրիշներ:

Գիտաժողովի աշխատանքներն ամփոփեց ֆիզիկայի և աստղաֆիզիկայի գիտական պրոբլեմային խորհրդի նախագահ, ակադեմիկոս Դավիթ Սեդրակյանը:

Գիտաժողովում ըստ ամենայնի քննարկվեցին Հայաստանում միջուկային էներգետիկայի նոր ուղղության զարգացման հեռանկարները՝ կապված լիցքավորված մասնիկների ինտենսիվ փնջերով արագացուցիչների կիրառման հետ, որը նպատակ ունի ընտեղծել ենթակրիտիկականին մոտ անվտանգ միջուկային ռեակտորներ և միջուկային ռեակտորների երկարակյաց ռադիոակտիվ թափոնների այրման տեխնոլոգիաները:

Գիտաժողովի մասնակիցները գտան, որ միջուկային էներգետիկայի նոր ուղղությունը հեռանկարային է Հայաստանի համար և նշեցին այդ ուղղությամբ գիտական հետազոտությունների անհրաժեշտությունը:

Մասնավոր ուշադրություն հրավիրվեց լիցքավորված մասնիկների կիրառմամբ միջուկային տեխնոլոգիայի հետազոտությունների զարգացմանը վերաբերող Երևանի ֆիզիկայի ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի միջուկային ֆիզիկայի ամբիոնի առաջարկություններին, որոնք պետք է պատշաճ աջակցություն ստանան, ֆինանսավորվեն:

Այդ հետազոտությունները վերաբերում են.

1. Ենթակրիտիկական, ուրանով (չհարստացած) և տորիով աշխատող էլեկտրամիջուկային ռեակտորների ընտեղծման հետ կապված խնդիրներին:

2. Արագացուցիչների օգնությամբ տրանսմուտացիայի և միջուկային ակտիվ թափոնների այրման հետ կապված խնդիրներին:

3. Ինտենսիվ փնջերով արագացուցիչների ստեղծման հետ կապված նախագծային աշխատանքներին:

Գիտաժողովը նշեց նաև, որ վերջին ժամանակներս նմանօրինակ շատ ակտիվ ուսումնասիրություններ են կատարվում Ռուսաստանում (ԻՏԷՖ և այլ ինստիտուտներ), Եվրոպայում (ՑԵՌՆ), ԱՄՆ-ում (Լոս-Ալամոսյան և Բրուկհեվենյան ազգային լաբորատորիաներ), Ճապոնիայում (Միջուկային հետազոտությունների ճապոնական ինստիտուտ, Միջուկային ռեակտորների և միջուկային վառելանյութի կորպորացիա):

Քննարկման արդյունքում գիտաժողովը որոշեց.

1. Առաջարկել Երևանի ֆիզիկայի ինստիտուտին, ՀՀ ԳԱԱ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքին ու Երևանի պետական համալսարանին, մշակել և մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը ՀՀ կառավարությանը ներկայացնել հիմնավորված առաջարկություններ՝ Հայաստանում միջուկային էներգետիկայի նոր ուղղության զարգացման վերաբերյալ:

2. Կազմակերպել հայ մասնագետների գիտատեխնիկական համագործակցությունն աշխարհի վերոհիշյալ կենտրոնների հետ:

Թռչող ափսե Երևանի վրա. միթե՞

Հանախ ռադիոյի և հեռուստատեսության հաղորդումների ժամանակ լսել և մամուլում ընթերցել էի թռչող օբյեկտների գոյության մասին: Նույնիսկ կինոնկարներ են ցուցադրել, սակայն այդ ամենին վերաբերվում էի անվստահությամբ և չէի հավատում: Բայց պատահեց անսպասելին. հունիսի 1-ի երեկոյան, բնակարանի ճնշող խավարից փախա փողոց, մի քիչ շունչ քաշելու: Օրը տաք էր, երկինքը պարզ ու աստղալից: Մոտավորապես ժամը 21-ն անց 45—50 րոպեին, հանկարծ ինչ-որ բան ստիպեց ինձ գլուխս վեր բարձրացնել: Եվ ի՞նչ. երևի մի 500 մետր բարձրությամբ, իմ գլխավերևում շարժվում էր մի խոշոր առարկա, ընթացքը շատ արագ չէր, լուսավորված պատուհաններն ինքնաթիռի տպավորություն էին թողնում, թևերի ծայրերին լույսեր էին առկայծում, գլխամասին և պոչին լույսեր կային: Առարկան դանդաղ շարժվում էր դեպի Գեղամա լեռները՝ ստեպստեպ կենտրոնական մասից դեպի պոչի մասը կապտավուն լույսի շիթ արձակելով: Այնպիսի տպավորություն էր, որ կարծես այրվում էր ու աճա վթարի պիտի ենթարկվեր: Շարժվում էր մեկ վեր, մեկ աջ ու ձախ: Սակայն ստեղծվեց մի պահ, երբ ուղղությունն վերցրեց դեպի հանդիպակաց լեռները և արագ անհետացավ հորիզոնում: Այդ ամենը տևեց շուրջ 4—5 րոպե: Տեսածով զարմացած՝ կանգնած մտածում էի, կարո՞ղ էր, արդյոք, վթարի ենթարկվող ինքնաթիռ լինել: Սակայն ոչ մի ձայն չէր լսվում, նույնիսկ շարժիչի ձայնը չկար:

Վերադարձա տուն: Երբ ներս մտա, ընտանիքիս անդամները անմիջապես ինձ հարցրեցին, թե տեսե՞լ եմ, արդյոք, այն առարկան, որ թռչում էր: Ես հարցրեցի՝ դուք ինչպե՞ս իմացաք, չէ՞ որ սենյակում էիք: Նրանք պատասխանեցին, որ Նորքի առաջին զանգվածից, որտեղ բնակվում է քրոջս աղջիկը, հեռաձայնել են և ասել՝ շտապ պատուհանից դուրս նայեք: Քրոջս աղջիկն ասաց ,որ իրենց շենքի մոտ բնակիչներից ու դրսում գտնվող մարդկանցից շատերը դարձան այդ դեպքի ականատեսը:

Հարգելի խմբագրություն. մի՞թե մենք հանդիպել ենք թռչող ափսեի հետ: Չէ՞ որ Գեղամա լեռներում նման անծանոթ օբյեկտի հայտնվելու մասին լուրը եզակի չէ:

ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ
Նոր Նորք, 4-րդ զանգված, 1-ին հատված, 6-րդ շենք, բն. 29

Երբ իմացան մեր հրապարակման մասին, խմբագրության այցելուներից ևս մի քանիսը պնդեցին, որ նույն օրը նկատել են նույն երևույթը:



Նորից եկավ ամառը...

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՃԱՆՃԸ

Աֆրիկյան մայրցամաքում նկատվում է կարմրագլուխ ճանճի ավելի ու ավելի վրտանգավոր դարձող հարձակումները մարդկանց և կենդանիների վրա: Մասնագետների գնահատմամբ, նրա պատճառած ադեսը համազոր է ՍՊԻԴ-ի բերած արհավիրքին:

Կարմրագլուխ այդ մսակերը արտաքինից ոչնչով չի տարբերվում իր ցեղակից մյուս ճանճերից, բացի այն, որ գլուխը կարմիր է: Սակայն այդ ճանճը մահաբեր է: Երբ նա ձու է դնում մարդու կամ կենդանու նույնիսկ աչքի համար աննկատ խոռոչներում կամ մաշկի ծալքերում, կարճ ժամանակ հետո ձվերից դուրս են գալիս հարսնյակներ, որոնց կերակուրը օրգանիզմի կենդանի հյուսվածքներն են: Ներթափանցելով վերքի մեջ, հարսնյակները բառացիորեն լափում են մարմինը:

Հիմնավորված տագնապ է հարուցում այդ սարսափելի ճանճի արագ տարածվելը: Վերջերս այդ վտանգը արդեն սպառնում է Հարավային Եվրոպային, Մերձավոր Արևելքին, Ասիային: Սակայն ամենավատթարը Աֆրիկայում է՝ Սահարայից հարավ ընկած տարածաշրջանում:



ՀՐԱԶԴԱՆԻ կիրճում անդորր է:

Լուսանկար՝ Պ. ՊՈՂՈՍՅԱՆԻ

Դիմում հայրենակիցներին

Թանկագին հայրենակիցներ:

Հայաստանի կառավարության որոշմամբ, Մեծ եղեռնի ութսունամյակի օրը, 1995 թ. ապրիլի 24-ին Երևանի Մեծեռնակաբերդի հուշահամալիրում բացվեց Հայոց ցեղասպանության թանգարանը: Այն կարևոր իրադարձություն է մեր ժողովրդի հոգևոր կյանքում և մեծ խորհուրդ ունի:

Թանգարանի ստեղծումը կրկին վկայում է, որ հայ ժողովուրդը երկյուղածությամբ է փայփայում իր պատմության լուրաքանչյուր էջը և չի մոռացել իր գոյության պատմության ամենամռայլ ու դաժան իրողությունը՝ Մեծ եղեռնը, երբ երիտթուրքերի կողմից պետականորեն ծրագրված ոճրագործության զոհ դարձան ավելի քան մեկ ու կես միլիոն հայեր, իսկ ողջ մնացածները բռնությամբ տեղահանվեցին իրենց բնօրրան պատմական հայրենիքից և գաղթի դաժան ճանապարհներով սփռվեցին աշխարհով մեկ:

Եղել են ժամանակներ, երբ մեր կյանքում հայոց ցեղասպանությունը լռության է մատնվել: Այն ժողովրդի հիշողությունից օտարելու առանձին փորձեր արվեցին և մեր օրերում: Սակայն կյանքը ցույց տվեց, որ ի վերջո, հնարավոր չէ վերակերտել պատմությունը հօգուտ իրավիճակային շահերի կամ քաղաքական միտումների թելադրանքի, որ մեր պատմության և՛ լուսավորը, և՛ ողբերգականը ժողովրդի սեփականությունն են:

Մեծ եղեռնը ամեն մի հայի սրտի մեջ բացված մի խոր վերք է, որ չի սպիանում: Քանի դեռ հայոց ցեղասպանությունը մարդկության կողմից չի դատապարտված, քանի դեռ ողջ են 1915 թվականի մղձավանջային օրերի ականատեսները, նրանց զավակները ու թոռները, քանի դեռ կա մարդկային հիշողությունը, հայոց ցեղասպանությունը մոռանալ հնարավոր չէ:

Այսօր, երբ Մեծ եղեռնից ութսուն տարի անց, հայոց ցեղասպանության հարցն արծարծվում է նաև միջազգային կազմակերպությունների և մի շարք երկրների հասարակական-պետական կյանքի ոլորտներում, առավել հրատապ է դառնում ցեղասպանության ճանաչման և դատապարտման խնդիրը: Այդ գործում ուրույն դեր ունի Հայոց ցեղասպանության նորաստեղծ թանգարանը, որը պետք է դառնա Մեծ եղեռնի մշտարթուն վրկան և իր հուժկու ձայնով ողջ աշխարհին իրազեկ դարձնի կատարված ոճրագործության մասին:

Թանգարանին տրվել է գիտահետազոտական հիմնարկի կարգավիճակ, և այն գործում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում:

Թանգարանը զբաղվում է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած արևմտահայության տեղահանության, ջարդերի և կազմակերպված ցեղասպանությանը վերաբերող աղբյուրագիտական, արխիվային նյութերի և փաստաթղթերի, պատմամշակութային արժեքների և տարբեր մասունքների հավաքման, ի մի բերման և ցուցադրման խնդրով:

Թանգարանի գիտահետազոտական գործունեությունը խարսխվում է հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրության հիմքի վրա: Հանրապետության գիտնականների ջանքերով վերջին երեք տասնամյակների ընթացքում ձեվակերպված Հայոց ցեղասպանության պատմության գիտական կոնցեպցիան ելակետային է մեր գործունեության համար:

Թանգարանի կարևոր խնդիրներից է՝ եղած բազմաթիվ փաստական նյութերի միջոցով հերքել ցեղասպանության ժխտման տեսակետը, ցույց տալ Թուրքիայում հայերի ազատագրական պայքարի բուն պատճառներն ու նպատակները նենգափոխելու փորձերի անհիմն ու հակագիտական լինելը:

Հայոց ցեղասպանության թանգարանը, իբրև գիտալուսավորական կենտրոն, կնպաստի ազգաբնակչության պատմական գիտելիքների հարստացմանը, ժողովրդի ինքնաճանաչման և ազգային ինքնագիտակցության զարգացմանը:

Իհարկե, կարճ ժամկետում թանգարանում հավաքած նյութերն ու փաստաթղթերը արդեն իսկ բավարար են Հայոց ցեղասպանության մասին ընդհանուր ճշմարիտ պատկերացում կազմելու համար: Սակայն մինչև օրս դատ նյութեր ու մասունքներ դեռևս հրապարակ չեն հանվել, և մեր կոլեկտիվը ձեռնամուխ է եղել դրանց հավաքման միջոցով հարստացնել թանգարանի ֆոնդերը: Այդ նպատակով կազմակերպվելու են գիտական արշավախմբեր և գործուղումներ, տարբեր կազմակերպությունների և հիմնարկությունների, ինչպես նաև անհատ մարդկանց հետ պայմանավորվածություններ ու նվիրատվություններ:

Թանգարանի տնօրինությունը դիմում է բոլոր այն կազմակերպություններին և անհատներին, որոնք առընչություն ունեն ցեղասպանության պատմությանը վերաբերող նյութերի (լուսանկարներ, ընտանեկան ալբոմներ, հնատիպ գրքեր և լրագրեր, անձնական և կենցաղային իրեր, կիրառական արվեստի նմուշներ և այլն) հետ և խնդրում նրանց օգնությունը դրանք թանգարանին տրամադրելու համար: Այդ գործում մենք մեծ ակնկալություններ ունենք Սփյուռքից:

Ամեն տարի բնության զարթոնքի հետ ապրիլյան օրերին աշխարհով մեկ ցրված հայության բեկորները հայրենի ժողովրդի հետ միաձույլ իրենց հարգանքի տուրքն են մատուցում եղեռնի անմեղ զոհերի հիշատակին: Սփյուռքը, լինելով ցեղասպանության և բռնի տեղահանման ծանր իրողություն, ազգային ինքնահաստատման և հայապահպանության իրականացումը տեսել և տեսնում է իր կորցրած արդար իրավունքների վերականգնման մեջ:

Հենց հայոց ցեղասպանության պրոբլեմի հայտնվելը միջազգային և մի շարք երկրների հասարակական-քաղաքական կյանքում մեծ չափով պայմանավորված է սփյուռքի ջանքերով: Հայաստանը համարելով իր գոյատևման գլխավոր կռվանը, սփյուռքահայությունը միշտ էլ իր նպաստն է բերել նրա զարգացմանն ու բարգավաճմանը, սատար կանգնել հայրենիքի ազգանպաստ նախաձեռնություններին ու ձեռնարկումներին:

Մեծ է սփյուռքահայության դերը մեր մշակութային տարագիր գանձերը անխուսափելի կորստից փրկելու և մայր հայրենիքում հանգրվանելու գործում: Վստահ ենք, որ Հայոց ցեղասպանության թանգարանի ստեղծման առիթով նույնպես այդ լայն ավանդույթը կշարունակվի և Սփյուռքի հեղինակավոր կազմակերպությունները, հայագիտությամբ զբաղվող հաստատությունները ու գիտնականները, անհատ մարդիկ, կանեն ամեն ինչ, օժանդակելու հայրենիքին՝ եղեռնի զոհերի հիշատակին արժանի ժամանակակից, բարձրակարգ թանգարան ստեղծելու գործում:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ
(Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա)

Մրցույթ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների տեղեկատվության խումբ.
— *խմբի ղեկավար (ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր կամ թեկնածու)— 1*
— *ավագ գիտաշխատող— 1*

2. Բնական գիտությունների տեղեկատվության խումբ.
— *խմբի ղեկավար (բնական գիտությունների դոկտոր կամ թեկնածու)— 1*
— *ավագ գիտաշխատող— 1*

3. Հումանիտար գիտությունների տեղեկատվության խումբ.
— *խմբի ղեկավար (հումանիտար գիտությունների դոկտոր կամ թեկնածու)— 1*
— *ավագ գիտաշխատող— 1*

4. Արտասահմանյան գրականության և մամուլի տեղեկատվության խումբ.
— *օտար լեզուների տիրապետող և թարգմանչական փորձ ունեցող ավագ գիտաշխատող— 4*

5. Գիտամեթոդական խումբ.
— *խմբի ղեկավար (ինֆորմատիկայի բնագավառում աշխատանքի փորձ ունեցող մասնագետ)— 1*
— *ավագ գիտաշխատող— 1*

Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.
1. *անձնական թերթիկ*
2. *լուսանկար*
3. *քնութագիր*
4. *դիպլոմի պատճեն (բուհի, գիտության թեկնածուի և գիտության դոկտորի)*
5. *հրատարակված աշխատությունների ցուցակ*

Դիմումը ներկայացնել ՀՀ ԳԱԱ գիտական տեղեկատվության կենտրոն (Երևան—19, Բաղրամյան 24 դ. 10-րդ հարկ, հեռախոսներ՝ 52-93-11, 52-86-76).

Ներկայացման ժամկետն է մեկ ամիս՝ սույն հայտարարության հրապարակման օրից:

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԿՆԹԱՐԹ: Թիֆլիս, 1880 թ. հայկական երաժշտանոցի դասախոսներ:

ԻՄ ՀԱՅՐԵՆԱԿՑԻ ՄԱՍԻՆ

Մարտիրոս Սարյանն իր նամակում գրել է Վավիկ Վարդանյանին. «Քո անձնվեր ծառայությունը հայ թատերական արվեստին, ինչպես և խանդավառ հասարակական գործունեությունդ մշտապես իր արձագանքն է ունեցել մեր հայ թատերասեր մտավորականներիս սրտերում»: Դերասանն ունեցել է բուռն կյանք. ծնվել է 1900-ին, հայրենի ծննդավայրից հեռու՝ Ղուբա քաղաքում: Պատանեկության տարիներն անց է կացրել Դերբենդ քաղաքում՝ Կասպից ծովի ափին: Բայց նախքան թատերական կյանքի բերկրանքը ճաշակելը, Կասպիական այիքները տասնութամյա Վավիկին տարան հյուսիս՝ Աստրախան: Կազմակերպչական ընդունակությունները, եռանդը և, որ գլխավորն է, դեպի թատրոնն ունեցած սերը երիտասարդ Վարդանյանին մղեցին ըզբաղեցնելու հայկական գործերի կոմիսարիատի Աստրախանի բաժանմունքին կից դրամատիկական ստուդիայի վարիչի պաշտոնը: Դա 1918 թվականն էր: Աստրախանում աշխատելուց հետո Վավիկ Վարդանյանը տեղափոխվում է Հյուսիսային Կովկաս՝ Ստավրոպոլ, ուր նրա նախաձեռնությամբ հայկական թատրոն է կազմակերպվում: Քսանամյա Վարդանյանը նշանակվում է նորաստեղծ թատրոնի տնօրեն և գլխավոր ռեժիսոր:

Վավիկ Վարդանյանը սովորելու նպատակով մեկնում է Մոսկվա, 1923—1925 թվականներին նա Ռ. Ն. Սիմոնովի ղեկավարած հայկական դրամատիկական ստուդիայում է, որը վերջացնելուց հետո մեկնում է Թիֆլիս և ներգրավվում հայկական պետական թատրոնի խմբի մեջ: Իր առաջին թատերաշրջանում (1925—26) Վ. Վարդանյանը Թիֆլիսի թատրոնում խաղում է «Բոռում», «Օթելլոյում», «Համլետում», «Պատվի համարում» և «Նամուսում»: Վահրամ Փափազյանը՝ թատրոնի խիստ քննադատներից մեկը, որպիսին նա հանդես է գալիս իր հուշերի էջերում, նշում է, որ դեռևս Թիֆլիսի հայկական թատրոնում ակնհայտ էր Վ. Վարդանյանի հակումը դեպի ռեժիսուրան: Չի կարելի պատահական համարել այն փաստը, որ արտիստ Վ. Վարդանյանին է հանձնարարվում Գ. Սունդուկյանի անվան թատրոնին կից դրամատիկական ստուդիայի կազմակերպումը: Նա նաև դասավանդում էր դերասանի վարպետություն և արևմտաեվրոպական թատրոնի պատմություն: Տաղանդավոր դերասանը հայ թատրոնի պատմության մեջ դարձավ 1944-ին Երևանում բացված առաջին թատերական բարձրագույն դպրոցի հիմնադիրն ու ղեկավարը: Շուրջ երկու տասնամյակ Վ. Վարդանյանը ղեկավարում է թատերական ինստիտուտի դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնը: 1946-ին նրան պրոֆեսորի կոչում է շնորհվում, 1955 թվականին Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում ստեղծվում է ստուդիա, որը կադրեր է պատրաստում Դաղստանի համար: Դեռ 1938-ին Վավիկ Վարդանյանին շնորհվեց հանրապետության արվեստի վաստակավոր գործչի կոչում, նա նաև Դաղստանի արվեստի վաստակավոր գործիչ էր: Տաղանդավոր դերասանը հայ թատրոնի այն գործիչներից է, որոնք ճանաչված ու գնահատված են ոչ միայն հանրապետությունում, այլև նրանից դուրս:

Հպարտանալու շատ բան ունեն և նրա հայրենակիցները՝ Ախալցխայի շրջանի Ծուղրութ գյուղի բնակիչները: Հայկական մի գյուղ, որ աշխարհին տվել է մեծատաղանդ գիտնականներ, արվեստագետներ, ռազմական գործիչներ: Այսպիսին է հայ Ծուղրութը՝ իր հայտնի եկեղեցիով ու «Ավետարանով՝ ըստ Հովհաննի»:

ՄԱՔԱՌՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Մեր ազգությունը զարգացնելու և ազգության գաղափարը հասարակաց դարձնելու համար ամենամեծ և զորավոր հնարներից մինն է նաև ազգային պատմության ուսումը»:
ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հայրենիքի, նրա ազատության ու անկախության գաղափարը, պայքարը այդ գաղափարի իրականացման համար միշտ էլ եղել է բազմադարյան հայ գրականության գլխավոր թեման: 1904 թվականին Թիֆլիսում կարդացած «Հայ գրականության գալիք օրը» դասախոսության մեջ Վահան Տերյանը դիպուկ նշել է, որ «հայ գրականության մեջ իշխող գաղափարը, նրա հիմնական առաջնորդ ուժը, ազգային գոյության, ազգային անկախության գաղափարն է... Հայրենիքի երգը մեզանում առավել կամ պակաս ուժեղ հընչեղ է Եղիշեից ու Խորենացուց մինչև մեր օրերը: Այդ գաղափարը կարմիր թելի նման անցնում է մեր գրականության միջով, դարձել է մի անբաժանելի հատկանիշ, գունավորել է մեր մտավորականության միտքն ու երևակայությունը դարեր շարունակ... Մի անհասանելի, մի բաղձալի ցանկություն, իղձ է դարձել այդ անկախ հայրենիքի, այդ ազգային գոյության գաղափարը»:

Հայրենիքի սիրո համար հայի ձեռքին բարձրացած Թուր Կեծակին նրա գոյատևության խորհրդանիշը դարձավ: Հիանալի է ասել Ավետիք Իսահակյանը «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի հազարամյակին նվիրված իր «Մեր պատմիչները և մեր գուսանները» ներբողում.

Մեր գեղջուկի պարզ խրճիթում,
սուրբ օջախի շուրջը նստած՝
գուսանները մեր խանդավառ,
առջևները գինի և հաց,
Վիպերգեցին հաղթանակը
դյուցազների մեր մեծազոր
Եվ ծաղրեցին պարտությունը
ոսոխների մեր բյուրավոր՝
Եվ հյուսեցին պատմությունը
հավերժացող ժողովրդի,
Վառ հավատով փառքերը մեր
ավանդեցին որդոց որդի,
Տեսան շքեղ մեր ապագան,
անընկճելի ազատ ոգին:

Հավերժացող ժողովրդին փառքի հիանալի ներբող էր Եղիշեի «Վարդանանց պատմությունը»: Եղիշեն այդ հերոսական մարտերի մասնակիցն էր, որի երկը ներծծված էր բուռն հայրենասիրությամբ: Գրքի առաջաբանում տաղանդավոր գրողը իր մատյանը համարել է «Սիրելիների համար մխիթարություն, հուսացողներին՝ հույս, քաջերին՝ քաջալերություն...»:

Հայ մարտիկները ինքնակամ և գիտակցված գնում էին մահվան՝ պաշտպանելու իրենց հավատն ու հայրենիքը և դրանով անմահանում: «Մահ ոչ իմացյալ՝ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն»,— այս իմաստությամբ է ներծծված Վարդանանց պատերազմի գաղափարախոսությունը:

Եղիշեն Վարդանանց և ժողովրդի միաբանությունը համարել է «բարի գործերի մայր, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը»: Հանձին Վասակ Սյունու և նրա կողմնակիցների՝ վասակյանների, Եղիշեն դատապարտում է հավատափոխությունը, դավաճանությունը: Եղիշեի «Վարդանանց պատմությունն» դյուցազներգությունը, 5-րդ դարից սկսած, պայքարի կոչեց հայ ժողովրդին՝ հանուն անկախության և ողջ հայ գրականության համար դարձավ ուղեցույց: Նրա ազդեցությամբ հաջորդ դարերում գրվել են շարականներ, պատմավեպեր, բանաստեղծություններ, թատերգություններ... «Հինգերորդ դարի բանաստեղծ-պատմաբան Եղիշեի դյուցազներգությունը,— նկատել է Ա. Իսահակյանը,— մի հիմն է ի փառս հայ ժողովրդի՝ պարսից փաղանգների դեմ նրա մղած պայքարի առթիվ»:

Սասանյանների դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարը գլխավոր նյութ դարձավ Փավստոս Բուզանդի և Ղազար Փարպեցու «Պատմություն հայոց» աշխատությունների համար: Հայրենասիրական ջերմ զգացմունքներով է շարադրված Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որում ամեն մի քաղաքական գործչի գնահատման ելակետն այն է, թե նա ի՞նչ օգտակար գործ է կատարում իր հայրենիքի ու ժողովրդի համար:

Մովսես Խորենացին ընդհանրացրել է հայոց ամբողջական պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև 5-րդ դարի առաջին կեսը: Խորենացին ընդգծում է, որ հայերը քաջ ազգ են «արդյունավոր, ոչ միայն խոսքի և պիտանի խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ փառավոր գործերով»: «...Թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհումն էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի...»:

Այդպիսի մեծեր Խորենացին համարում է նրանց, ովքեր եղել են աշխատասեր և հայրենասեր, պատրաստ «հայրենիքի համար մեռնել, քան թե տեսնել, թե ինչպես օտարացյալ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները»: «Հայոց պատմության» մեջ գիտական և գեղարվեստական բարձր մակարդակով ցույց են տրված հայոց մեծերի գործերը, հայերի գոյատևման կռվանները: Ընդգծված են ազգի, ազգային միասնության, պետականության և միասնական հայրենիքի գաղափարները: Խորենացու հայրենասիրական մատյանը մեծ ազդեցություն է ունեցել ողջ հայ գրականության, հետևաբար և հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին նվիրված հայրենասիրական գործեր են ստեղծել 7—9-րդ դարի պատմագիրներ Սեբեոսը, Ղևոնդը, Մովսես Կաղանկատվացին և ուրիշներ: Սեբեոսը գրել է հայոց ամբողջական պատմություն՝ Հայկ Նահապետից մինչև 661 թվականը, այն գրված է հայրենասիրական և բարձր գեղարվեստական շնչով:

8-րդ դարի պատմիչ Ղևոնդը հաղորդում է, որ հայրենիքի համար ինքնակամ նահատակության գնացող հայ ռազմիկները իրար քաջալերում էին գոչելով՝ «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար և թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբությունների ոտնակոխ լինելը»:

Հովհաննես Դրասխանակերտցին (10-րդ դար) իր «Հայոց պատմության» մեջ երկրի ղեկավարներին թախանձում է առաքինի ու միաբան լինել: Թովմա Արծրունին, իր «Արծրունյաց տան պատմություն» երկում նկարագրում է սասունցիների ազատագրական կռիվները: 11-րդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերցին իր «Պատմության» մեջ հայրենասիրական մեծ շնչով նկարագրում է հայ ժողովրդի անձնազոհ պայքարը սելջուկ թուրքերի ավերիչ արշավանքների դեմ, դատապարտում վախկոտներին և փառաբանում հայրենիքի քաջարի պաշտպաններին:

Թուրք-սելջուկների դեմ մղած ճակատամարտերից մեկում գերված քաջ ու պատերազմասեր հայ զորական Թաթուլին տանում են սուլթանի մոտ, որովհետև պարսից Արսուբան ամիրայի որդուն Թաթուլը կարևոր վիրավորել էր: «Սուլթանը, նրան տեսնելով, ասաց. «Եթե դա ապրի, քեզ կազատեմ, բայց եթե մեռնի, կհրամայեմ, որ քեզ դրան մատաղ անեն»: Իսկ Թաթուլը պատասխանում է. «Եթե իմ զարկածն է, չի ապրի»: Քիչ օրերից հետո նա մեռավ: Երբ Սուլթանն այդ լսեց, հրամայեց Թաթուլին սպանեն և նրա աջ բազուկը կտրելով ուղարկեց Արսուբանին՝ որպես մխիթարություն, թե քո որդին վատ բազկից չի մեռել»:

8—10-րդ դարերում ձևավորվում է «Սասնա ծռեր» դյուցազներգությունը, որն արտացոլում է արաբական բռնակալության դեմ հայ ժողովրդի երկարատև ու հերոսական պայքարը: Հայկական հերոսապատման քաջ գիտակ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին գրել է. «Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է բազմաթիվ դյուցազներգություններ, որոնց մեջ ամենաքնորոշը, առավել նշանակալիցը, ամենից ավելի արտահայտիչն ու հերոսականը, մեծն ու համապարփակը «Սասունցի Դավիթ» էպոսն է»:

12—14-րդ դդ. պատմագիրներ - Մատթեոս Ուռհայեցին, Սմբատ Սպարապետը, Ներսես Շնորհալին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը և ուրիշներ, նկարագրել են հայերի պայքարը բյուզանդական, թուրք-սելջուկ, մոնղոլ և այլ նվաճողների դեմ, անդրադարձել Կիլիկիայի հայկական իշխանության հերոսական պատմությանը: 15-րդ դարի պատմագիր Թովմա Մեծոփեցու պատմությունը նվիրված է Լենկթեմուրի արշավանքին և դաժան նվաճողի դեմ հայ ժողովրդի անձնվեր պայքարին:

Քաղաքական մաքառման ոգով են տոգորված նաև հայ միջնադարյան հոգևոր օրհներգությունները: Դրանցում փառաբանվում են հանուն ազատության և հայրենիքի անկախության գործված սխրանքները: Ներսես Շնորհալու «Ցիշեցուք» և «Զարթիր» հայրենասիրական երգերը նախապես գրված են եղել Հռոմկլա բերդի պահապան հայ զինվորների համար և միայն հետագայում են երգվել եկեղեցում: Ներսես Շնորհալու համոզմամբ, ազգային կենտրոնացված պետականության բացակայության պայմաններում, հայ եկեղեցին այն միակ հաստատությունն էր, որ պետք է համախմբեր ժողովրդին և կազմակերպեր նրա ինքնուրույն գոյատևումը: Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի հերոսները, կարծես կրկնելով Եղիշեի վարդանանց, այսպես էին քաջալերում իրար.

Հապա եղբայրք, սիրելիք,
Մի զարհուրեք առ ձայնեին,
Զմահն ընտրեցեք դուք
քաջության,
Որքան ըզկյանս է գովելին...

Հետագա դարերի հայ գրականությունը սրբությամբ շարունակեց միջնադարյան մեր պատմագրության հայրենասիրության և ազատասիրության ավանդները՝ իր լավագույն երկերը նվիրելով հայրենիքի անկախության և ազատության համար հերոսացած ու նաև մարտիրոսացած ժողովրդի լավագույն զավակներին:

ԳԵՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Կոնտր-ադմիրալը

Ծովերից ու լճերից այն կողմ, բարձրաբերձ լեռների միջով գալար տվող Քուռ գետի ափին փռված Ախալցրխա քաղաքում, 1904 թվականին ծնվեց մի մանչուկ, որին Արտավազդ կոչեցին:

Փոքրիկը հորից զրկվեց երկու տարեկան հասակում, իսկ երբ տասնչորս տարեկան էր՝ նաև մորից: Ավագ քույրը՝ Հեղինեն, դարձավ տղայի խնամակալն ու դաստիարակը: Գոյությունը պահպանելու համար տասնհինգամյա Արտավազդը դառնում է փայտամշակման ֆաբրիկայի բանվոր:

1922 թ. աշնանը Արտավազդն ընդունվում է Բաթումի ռազմածովային ուսումնարանը: Հրամանատարության որոշմամբ, 1924 թ. ուսման առաջավորներին, այդ թվում Արտավազդ Սագոյանին, տեղափոխում են Լենինգրադի ռազմածովային բարձրագույն ուսումնարան՝ սովորելու և կատարելագործվելու: Սագոյանը 1927 թվականին գերազանց գնահատականներով ավարտում է Լենինգրադի ռազմածովային բարձրագույն ուսումնարանը: Ռազմածովային նավատորմի երիտասարդ սպա Սագոյանի ծառայությունն սկսվում է «Մարտին» ռազմանավում:

Սագոյանը միաժամանակ սովորում և ավարտում է ռազմածովային բարձրագույն դասընթացները և նշանակվում Դնեպրյան ռազմական նավատորմիղի հրետանային ծառայության պետ: Դնեպրյան նավատորմիղում մի քանի տարի ծառայելուց հետո, 1936-ին Սագոյանը դառնում է ռազմածովային ակադեմիայի հրետանային ֆակուլտետի ունկնդիր: 1941-ին նա հաջողությամբ ավարտում է ակադեմիան և նշանակում ստանում Բալթյան նավատորմ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Սագոյանը մասնակցել է գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղված բազմաթիվ ծովային մարտերին:

Լենինգրադի հերոսական պաշտպանության ամբողջ ժամանակաշրջանում Սագոյանը դեկավարել է նավախմբի նավերի հրետանու մարտական գործողությունները և իր ակտիվ մասնակցությունն ունեցել Լենինգրադի տակ թշնամու ջախջախման գործում: Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո, 1-ին կարգի կապիտան Արտավազդ Սագոյանը մոտ հինգ տարի պատասխանատու պաշտոններ է վարել ԽՍՀՄ ռազմածովային ուժերի գլխավոր շտաբում: Այնուհետև հրամանատարություն երեսն աշխատանքի է նշանակում Ա. Ն. Կոմյովի անվան նավաշինության գինվորական ակադեմիայում, ուր Սագոյանը դասավանդում էր մարտավարություն, միաժամանակ մեծ եռանդով զբաղվում էր գիտահետազոտական աշխատանքներով:

1951 թ. առաջին կարգի կապիտան Արտավազդ Սագոյանին շնորհվում է կոնտր-ադմիրալի կոչում:

Սագոյանի բեղմնավոր գրչին են պատկանում ռազմածովային նավատորմի մարտունակության և ճոգության բարձրացմանը նվիրված մի շարք ծանրակշիռ գիտական աշխատություններ:

Արամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ախալցխա, Ծուղրութ

«ԴԱՂՏՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» (ԲՐՈՆԶ):
«ԱՐՏԱՄԵՏԻ ՄԱՐԴԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ» (ԲՐՈՆԶ):

Հաղորդություն

Քանդակագործ Գագիկ ՂԱԶԱՐՅԱՆԻ արվեստանոցում

Աղջամուղջից հետո մնաց ճերմակ լույսի մի ճառագայթ, տարածվեց օդում, երիզվեց ու դարձավ ճերմակ մի ժապավեն, փաթաթվեց լույսի ճառագայթից ծնված լույս հայացքով աղջկա շքեղ վարսերին, հետո նորից լույսից դողալով շղարշվեց ու դարձավ ճերմակ շղարշ, թափանցիկ ու նուրբ, զգայուն ու լուսավոր, ինչպես լույսը...

Աղջիկը սովորական ու անսովոր հարդարեց, ուսերին փռեց իր շքեղ մազերը, իսկ լույսի շղարշը գնալով թանձրացավ, թանձրացավ ու մնաց օդում, ճերմակ լույսի թանձր ճանապարհը... Այդ ճանապարհով ոչ ոք դեռ չէր անցել... Աղջամուղջն ու լույսը վաղուց իրար չէին հանդիպել... Լույսը աղջկա վարսերից սփռվել ու տարածվել էր օդում...

Հետո լույսին ինչ որ ձայներ հասան... Այդ ձայներից մեկը նրան հասկանալի էր, շատ էր հասկանալի...

Լույսի ճառագայթը լուռ սահեց երկնքի ճանապարհով ու ձուլվեց ձայնին: Հիմա նրանք երկուսով էին՝ լույսն ու ձայնը: Հետո նրանք ձեռքեր զանազանեցին՝ պարզված դեպի իրենց ու ճանաչեցին, որ այդ ձեռքերն էլ են իրենցը՝ նրանք օդում խարխափելով երկար փնտրել էին իրե՛նց լույսը, իրե՛նց ձայնը...

Հիմա նրանք արդեն միասին էին:

Ձեռքերը հանդիպումից ժըպտացին, միայն թե այդ ժպիտը սովորական ժպիտ չէր: Այդպես ժպտում է լույսը, որ տարածվում է աղջկա ճոխ վարսերից օդում: Այդպես ժըպտում է հանդիպումը...

Քանդակագործը չէր ժըպտում: Նա իր ժպիտը նվիրել էր աղջկա ցոլացող լույսին և հիմա արվեստանոցի պատերի ներսում ոչ մի ներմուծված լույսի կարիք չկար: Արվեստանոցն իր օրենքներով էր ապրում, իր լույսով, իր ժպիտով... Աղջիկը թեք հայացքով ամոթխած նայում էր քանդակագործի ձեռքերին, որոնք իրեն հավերժացրել էին...

Արվեստանոցի պատին հենած հարթաքանդակում հարսանիք էր պատկերված: Խընջույքի ձայնը հեռվից էր գալիս... Աղջիկն անհաղորդ էր հարսանիքի արարողությանը: Խնջույքի ձայնը նրան չէր հասնում: Նա լսում էր իր սրտի տրոփյունը, իր սրտի հուզումը, քանդակագործի մատների հպումը իր շքեղ վարսերին, արթնացող կրծքերին...

Արվեստանոցի մի անկյունում տարբեր խառնվածքի կանանց քանդակներ էին՝ կավից ու հրակավից, բրոնզից ու բրոնզագույն լույսով... Աղջիկը անվրդով իր անուրջների հետ էր: Նա միշտ ջահել էր մնալու: Նա միշտ զգալու էր քանդակագործի ձեռքերի ջերմությունը, հպումը, գորովանքը...

— «Անմեղություն». այս աշխատանքը... այդպես է կոչվում: Կարմիր գետաքարից է: Քանդակագործը հերթով փոխանցում է տեսապատկերները...

Անմեղությունն... կարմիր գետաքարից... Կինը մի պահ լռում է, մտքի մեջ ընկնում... Անմեղությո՞ւն... կարմիր գետաքարի՞ց...

Կինն ուժ է գտնում ձեռքն առնելու անմեղության քանդակի տեսապատկերը: Կնոջ հայացքը հանդիպում է քանդակագործի հայացքին: Նրա ձեռքից կնոջ ձեռքին է փոխանցվում քանդակագործի ձեռքի առնական ուժը, քանդակագործի հոգու փխրուն նրբությունը, խորությունը...

Արվեստանոցի կենտրոնում մի քիչ կորացած մեջքով, իմաստուն, շատ բան տեսած հայացքով ու աշխարհի չարն ու բարին զանազանող հրեշտակապետն է... «Ծերացած հրեշտակ»— ներկայացնում է քանդակագործը...

— Ծերացած հրեշտա՞կ... Մի՞թե հրեշտակները ծերանում են...

— Այս հրեշտակը ծերացել է:

Կինը մտքով տեսնում է իրեն ծանոթ այսպիսի հրեշտակների, բարությունից հոգնած ու սմքած դեմքերով, ձանձրացած ու անուժ՝ չարի դեմ, աշխարհի անց ու դարձը շրջել անկարող... ծերացած հրեշտակ...

Քիչ այն կողմ մի բարձրահասակ տիկին է՝ աչքերն անթարթ, գլուխը բարձր, վերարկուն մինչև գետին, անձրևանոցը գետնին հենած:

— Սա մի հպարտ տիկին էր,— ներկայացնում է քանդակագործը:

— Մինչև վերջ էլ հպարտ մնա՞ց...,— հարցնում է կինը կանացի շեշտով:

— Այո՛, մնաց...,— ասում է քանդակագործը...

«Անմահական խանձարներ» աշխատանքը դրված է Ցալթա քաղաքի հեքիաթների բացատում...

Հեքիաթներն սկսվում են այս արվեստանոցում, երբ բոլորով հավաքվում են պատմելու «Հիշողություններ Կոնդից»: Մարդիկ հոգնած իրենց սովորական դեմքերից՝ կավե դիմակներ են հագել ու աշխարհին նայում են հենց այդ դիմակներից, և դա է ճշմարիտ հայացքը... Ծերացած հրեշտակապետը աչքի տակով նայում ու ժպտում է հպարտ տիկնոջ ինքնահավանության վրա:

Կանգնած է քանդակագործը բրոնզաձույլ կանանց կողքին... Լուսանկարիչը խնդրում է ժպտալ: Քանդակագործը փորձում է ժպտալ... Բրոնզաձույլ կանանց մերկ մարմինները նրա ժպիտից ավելի են շողում... Քանդակագործը գիտե, որ հաղթեց կինը՝ գեղեցիկ ու գրկաբաց, կանացի ու բնական սիրատենչ կինը՝ «Ներբող Մայրին»:

Քանդակագործը ժպտում է ու ժպիտը միանում է նրա սև՝ աձանձրանոցի վրա թևերը տարածած սպիտակ շարֆի հյուսվածքին, հետո ճերմակ լույսի հետ տարածվում ցուցասրահում...

Անմեղությունն... որ ծնվեցիր հրակավից, որ հյուսվեցիր ամոթխած աղջկա շքեղ վարսերից, որ դարձար լույսի ճառագայթ՝ ճերմակ լույսի ճանապարհ... անվերջ ու անսկիզբ անմեղությունն... Որ պիտի ուղեկցես քանդակագործին...

Սիրո սկիզբը այն հրակավն է, այն արևով բովված կավը, որով Աստված կերտում է կին ու տղամարդ...

Հաղորդությունն... Ներբող քանդակագործին...

Կարինե ՍԱՄՎԵԼՅԱՆ

Ե՛Վ ԿԱՏԱԿ, Ե՛Վ ԼՈՒՐՋ

«Նպատակ»-ը որոնում է հովանավորներ

Այն բանից հետո, երբ պարզվեց շուկայական հարաբերությունների մեջ մտնելու հայ գիտնականների անկարողությունը, նրանք հայտնվեցին թշվառ վիճակում: Երբ փողոցում պաղպաղակ լիզող տղերքը իրար հետ զրուցելիս խոսում են Մխոյի կամ Սքեյի ռեստորաններում 1200 դոլլարի հաշիվ փակելու մասին, հայ գիտնականներն ամեն ամսի վերջին դողդոջ ձեռքերով հաշվում են իրենց 1200 դրամն ու 32 լուման:

«Նպատակ» թերթը լինելով այդ գիտական համակարգի անբաժան մասը և «սնվելով» արյունատար նույն անոթներից, ևս հայտնվեց թշվառ վիճակում: Իր տպաքանակի հաշվին հոգալով խմբագրական ծախսերը, այն է՝

1. աշխատողների ողորմելի աշխատավարձը

2. հեղինակային ծիծաղելի հոնորարը

3. գրասենյակային զուսպ ծախսերը

«Նպատակը» կանգնել է «Պարբերականի» պարտքերը փակելու անզորության առաջ: «Պարբերականին» մոդա դարձած մեղադրանքների սիրահարներին տեղյակ ենք պահում, որ տվյալ դեպքում ՀՀ ԳԱԱ-ն է, որ անզոր է փակել պարտքերը: Այդ պատճառով «Նպատակը» դիմում է բոլորին՝ ով ցանկանում է հովանավորել թերթի հրատարակությունը, կարող է դիմել խմբագրություն՝ ամեն օր, առավոտյան ժամը 9—14-ը (բացի շաբաթ և կիրակի օրերից):

Հովանավորներ կարող են դառնալ 17-ից բարձր տարիքի բոլոր անձիք, ովքեր մեկ երեկոյի ընթացքում ռեստորանում փակում են 1200 դոլլարի հաշիվ, այդ թվում՝ պարոն Մխոյի և պարոն Սքեյի ռեստորան հաճախող, փողոցում պաղպաղակ լիզող տղերքը, նույն Մխոն ու Սքեն կամ նման այլ անուններով պարոնները:

Հովանավոր չեն կարող դառնալ.

— խորհրդարանի պատգամավորները

— ուժային նախարարությունների ներկայացուցիչները

— անմեղսունակները

— արտասահմանի ազգականների կողմից հումանիտար օգնություն ստացողները

— երաժիշտները (քանի որ «Նպատակը» ուրիշի նվագի տակ չի պարում)

— քրեական հետախուզության մեջ գտնվողները:

Հիշեցնում ենք մեր ծախսերը.

Բոլոր աշխատողների մեկ ամսվա աշխատավարձը— 6400 դրամ

մեկ ամսվա հոնորարը— 2 հազար դրամ

մեկ ամսվա տպագրական ծախսերը— 70000 դրամ

Թղթի արժեքը— 43 հազար դրամ

ամրակներ— 150 դրամ

ընդամենը— 129 հազար 50 դրամ, որը հավասար է 300 դոլլարի:

Ինչպես տեսնում եք՝ լավ տղերքը բավական է մի երեկո ռեստորանային ճաշկերույթն ավարտեն առանց դեսերտի, «Նպատակ» թերթը կարող է ապրել ևս մեկ ամիս: Դե, նման պայմաններում ինչպես կարող ենք խմբագրություն չհրավիրել հովանավորներին: Համեցե՛ք, պարոններ...

ԱՐԱԲԱԿԱՆ արևմուտքի ամենահին քաղաքներից է Ֆեսը, որին Մաղրիբի մայրաքաղաք են անվանում: Միջին դարերից, ամեն մի տիրակալ իր պարիսպն ու դարպասներն է կառուցել, և քաղաքը մինչև օրս պահպանել է ոչ միայն իր միջնադարյան տեսքը, այլև՝ նիստուկացը:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ.— 1. Ֆեսի Բաբ էլ Մանդեբ (Մանդեբի դարպասները): 2. Ֆեսի գլադարանը՝ Մեդրեսեն, հինավուրց է արաբական աշխարհում:



ԿԱՆԻ (Ֆրանսիա) համալսարանը գիտական խոշոր կենտրոն է: Այստեղ հիմնականում սովորում են ասիացի և աֆրիկացի երիտասարդները:

ԿԱՀԻՐԵ. Դեգիրեն քաղաքի կենտրոնի հետ կապող այս կամուրջը ձեզ կտանի Սեմիրամիդ (Շամիրամ) հյուրանոց և առևտրական կենտրոն (տոնավաճառ) խանդալի: (Տպագրում ենք ի գիտություն հայ բիզնեսմենների):

Վ. Մ.

Մահվան երկու երեսը...

Ի՞նչ է կատարվում մարդկանց հետ մահվանից հետո: Անգամ շատ կրթված մարդիկ հաստատում են՝ «ոչինչ»:

Բայց նրանք, որ ինչ-որ ժամանակ հայտնվել են կլինիկական մահվան վիճակում, մերժում են այդ կարծիքը: Ավելին, դեռ 20-րդ դարի սկզբին անգլիական «Հոգեկան հետազոտությունների ընկերությունը» ապացույցներ էր ձեռք բերել «Այն աշխարհի» գոյության մասին:

ՄԱՀՎԱՆԻՑ ՀԵՏՈ

Ոչ մեկի մահվամբ նրա գոյությունը չի դադարում: Ամբողջությամբ և առանց փոփոխության պահպանվում են հիշողությունը, սովորությունները, հակումները, ձգտումներն ու մտքի ընթացքը:

Մեռնողը ոչ Աստծու հետ է հանդիպում և ոչ էլ նրա ներկայացուցիչների: Նա հայտնվում է բնական մի աշխարհում, որը կառավարվում է իրեն անծանոթ բնական օրենքներով: Մահվանից հետո մարդկանց ճակատագրերն ընթանում են երկու հիմնական սխեմայով: Կամ նրանք ընկնում են **հոգևոր աշխարհ**՝ երկնային և երջանիկ մի վայր, կամ մնում են **երկրամերձ տարածքում,** որն այնքան էլ հարմարավետ չէ:

Հոգևոր աշխարհը լուսավոր մի բնակավայր է, ուր մեռնողին սպասում են իր տունը և նրան սիրող այն մարդիկ, որ մեռել են իրենից առաջ:

Բոլոր նրանք, ովքեր ընկնում են այս աշխարհը, գիտեն, որ դուրս են եկել իրենց նյութական մարմնից և ձեռք են բերել իրենց բարոյական նկարագրին համապատասխան ատրալ (հոգևոր) մարմին: Հոգևոր այդ մարմինը նրանք ընկալում են ճիշտ այնպես, ինչպես կենդանի մարդիկ իրենց մարմինները: Վերին, հոգևոր աշխարհի էակները հընարավորություն ունեն գնալ իրենցից ցած գտնվող շերտերը: Նրանք այնտեղ այցելում են իրենց հարազատներին և մտերիմներին, օգնում ուրիշ, ավելի անկատար հոգիներին:

Այն աշխարհում մարդու ճակատագրի համար ամենակարևորը հոգեկան ապրումների բնույթն է: Արատավոր վարքն ու մղումները հոգևոր աշխարհում անմիջապես պատժվում են՝ ավելանում են կնճիռները, ծերանում է հոգևոր մարմինը, վատանում են տան պայմանները: Լուրջ զանցանք թույլ տալու դեպքում մարդը կալանավորվում և հայտնվում է բանտում կամ նմանատիպ մի վայրում, և այնտեղ էլ տառապում է մինչև ուղղվելը:

Վարի՝ **երկրամերձ** աշխարհի կյանքը, ինչպես ասում են, հարսանիք չէ: Այստեղ առկա են ճակատագրերի հետևյալ տիպերը:

Մարդիկ, որոնք կենդանության օրոք ֆանատիկորեն չէին հավատում անդրերկրային կյանքի գոյությանը (մատերիալիստներ և երկրորդ հայտնության ժամանակ հարության սպասողներ):

Սրանք **այն աշխարհում** կամ միշտ քնած են, կամ անգիտակից վիճակում են: Սրանք չեն տանջվում, բայց միևնույն ժամանակ երջանիկ էլ չեն:

Ամեն կարգի եսասերները, գրեթե բոլոր ինքնասպան եղած մարդիկ և իրենց մահով չմահացածների մեծ մասը գտնվում են խուլ մթության մեջ, լիակատար մենության գրկում: Հոգեկան տվայտանքներին գերի, նրանք աննպատակ թափառում են: Նրանց միտքը աստիճանաբար սպառվում է, որպես անհատներ նրանք խեղվում են՝ մոռանալով իրենց անունները:

Նրանք, որ մահացել են ոչ բնական մահով (զոհվածներն ու ինքնասպանները), ապրում են մթության մեջ՝ մինչև իրենց բնական վախճանի օրը: Դրանից հետո նրանք ընկնում են **հոգևոր աշխարհ** (ուր նրանց տանում են հարազատները կամ մտերիմները) կամ մնում են **մերձերկրային** աշխարհում և տեսնում ամեն ինչ:

Անբիծ նկարագրի մարդիկ, որոնք չեն գիտակցել իրենց մահը, կրոնական ֆանատիկները, օրթոդոքսները և որբերը մնում են **մերձերկրային** աշխարհում: Նրանք տեսնում են ապրողներին, լսում նրանց խոսակցությունները, ընդունակ են հաղորդակցվելու իրենց ընտանիների հետ: Նրանք հարցնում են, թե ի՞նչ է կատարվել իրենց հետ, սակայն, մյուս մահացածները իրենք էլ այդ չգիտեն:

Իսկ ողջերը սովորաբար նրանց չեն լսում: Կան նաև մեռնողներ (հատուկենտ), որոնք մնում են նյութական աշխարհում՝ սահմանափակ տարածքում, պատահական մարդկանց շրջապատում, մարմնավորվելով նրանց մեջ: Ըստ որում, մարմնի իսկական կենդանի տերը չի կռահում իր նոր վիճակի պատճառները, իսկ ողջերը նրանց համարում են հոգեկան հիվանդներ:

ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԸ

Այն աշխարհում տառապանքների ենթարկվելու հիմնական պատճառը անբարո ապրած կյանքն է: Այո, մարմնից «անհատի» թռչելուց հետո տառապանքներն անհամեմատ ծանրանում են: Մահվանից որոշ ժամանակ անց, հոգեկան տառապանքներն աքցանի մեջ են առնում **արատավոր** մարդուն և անընդհատ կրկնվելով՝ դառնում են նրա կյանքի միակ բովանդակությունը: Խիղճը, որը նրա մեջ լռել էր ապրած տարիներին, մահվանից հետո զարթնում է: **Մարդասպանն** անընդհատ տեսնում է իր զոհերին, վերապրում նրանց տանջանքները: **Նախանձոտ և չարակամ** մարդիկ տառապում են իրենց անգութ արարքների համար: Ցանկացած **թմրադեղ օգտագործած** մարդն անսահմանորեն տանջվում է՝ չկարողանալով բավարարել թմրանյութ ընդունելու խելագար պահանջը: **Եսասերները** հոգեպես խոշտանգում են իրենց, որ բարի գործ չեն արել կենդանության օրոք, տանջվում են այն տառապանքների համար, որ պատճառել են մարդկանց: **Անբանն ու ծույլը** տանջվում է իր անիմաստ գոյության համար: **Վախկոտին** չի լքում սարսափը: **Ժլատը** տեսնում է, թե ինչպես իր դիզած հարստությունը վատնում են ժառանգորդները, և նույնպես տանջվում:

Անբնական մահով վախճանվածները, ինչպես արդեն ասվեց վերևում, տանջվում են մինչև իրենց բնական մահվան պահը: Ինքնասպանը տարին-տարվա ետևից վերապրում է իր մահվանը նախորդած տառապանքները, սարսափ ու ֆիզիկական ցավը: **Մերձերկրային** շատ հոգիներ տառապում են իրենց նյութական մարմինների ցավերով: Բավական է նրանք հասկանան, որ իրենց մարմինները մեռած են, այդ ցավերն այլևս չեն լինի: Բայց նրանք ի վիճակի չեն գիտակցելու այդ, և շարունակում են տառապել «հնարած» ցավերով:

ՔԱՎՈՒԹՅՈՒՆ

Գործած չար արարքների համար տառապանքների ենթարկվելուց ազատվելու ելքը ամենից առաջ զղջալն է, և երկրորդ, քավել մեղքերը՝ մյուս մահացածներին ծառայելու և օգնելու միջոցով: **Անդրաշխարհի առաջադիմության էությունն այն է, որ կարողանաս հաղթահարել քո արատավոր ցանկությունները և անձնվիրաբար ծառայես մարդկանց** (այն աշխարհի): Մեղքերը քավելուց հետո միայն (այս և այն աշխարհներում) դուք հընարավորություն եք ստանում տան տեր դառնալ հոգևոր աշխարհում և իրավունք, որ բարեկամներդ այցի գան քեզ:

Մերձերկրյան ոլորտից հոգևոր աշխարհ բարձրանալ կարելի է միայն ու միայն սեփական ցանկությամբ: Ինչպես ասացինք, մարդկանց անձնվիրաբար ծառայելուց և դրանով իսկ մեղքերը քավելուց հետո: Դա երկարատև, դժվար գործընթաց է:

Հոգիներին ծառայելը արտահայտվում է տարբեր ձևով:

Մեռածների ծառայությունը ողջերին կայանում է նրանում, որ մահկանացուներին պաշտպանեն չար, եսասեր, անկիրթ ու անարժան հոգիների ազդեցությունից:

Հոգևոր աշխարհում ապրողների համար երջանկության չափը տարբեր է՝ կախված նրանց արած գործերից: Հոգևոր աշխարհի վերին ոլորտներում թագավորում է երկնային քաղաքայությունն ու սերը, հոգիների ներդաշնակությունը և անդորրը: Նրանց աչքերի առջև հրաշալի երկիրն է, բնության զարմանալի համայնապատկերը, գեղեցիկ տներ: Նրանք վայելում են երկնային կյանքի հաճույքները:

Հոգևոր աշխարհի բնակիչները կարող են ճանապարհորդել անգամ իրենց մտքի ուժով: Մեկ օրվա ընթացքում **հոգևոր աշխարհի** ներկայացուցիչը ստանում է այնքան իմացություն, որքան ձեռք է բերել ողջ կյանքի ընթացքում:

Հոգևոր աշխարհում մարդն անընդհատ զբաղված է. նա այցելում է **մերձերկրային** ոլորտ՝ դժբախտ հոգիներին օգնելու համար, ուսումնասիրում երկու աշխարհների կառուցվածքն ու օրենքները, հանդիպում է ընկերների հետ, ճանապարհորդում է և ճանաչում երկրային նյութական աշխարհը:

Հոգևոր աշխարհի հոգիները բազմապիսի բարի գործեր են կատարում: Օրինակ, նրանք վերակենդանացնում են մեռած այն ծնողներին, որոնք չեն ուզում լքել իրենց մանկահասակ երեխաներին: Իհարկե, եթե նրանց նյութական մարմիններն անդառնալիորեն չեն վնասվել: Մարդկանց նախազգուշացնում են նրանց սպառնացող մահացու վտանգի մասին՝ ներշնչելով մոտալուտ աղետի նախազգացում:

ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Նյութական և **այն աշխարհներում** կան առանձին մարդիկ, որոնք ի վիճակի են հաղորդակցվել (սահմանափակ) մյուս աշխարհի հետ: Այդ կապերը շփոթության են մատնում ժամանակակից գիտությանը և նյութական աշխարհի շրջանակներում անբացատրելի են: **Այն աշխարհի** հյուրերն իրենց դրսևորում են տարբեր կերպ, և մարդիկ էլ նրանց տալիս են տարբեր անվանումներ՝ ուրվականներ, ոգիներ, չարքեր: Գուշակների և էքստրասենսների միջոցով նրանք մարդկանց հաղորդում են բազմապիսի տեղեկատվություն՝ օգտակար տեղեկություններից մինչև անհեթեթություն ու ցնդաբանություն:

Կան մարդիկ, որոնք օժտված են այնպիսի ընդունակություններով, որոնք հատուկ են միայն մեռածներին (**այն** աշխարհի ներկայացուցիչներին): Դրանց դրսևորումներն են հեռազգացությունը, պայծառատեսությունը, տելեկինեզը, մարգարեությունը, գուշակությունը, «չար աչքը» և այլն, և այլն:

Մահը չի լուծում կյանքի պրոբլեմները, պրոբլեմները մնում են, և հարկ է լինում դրանք լուծել **մյուս** աշխարհում: Ինչպես որ **«Այնտեղ»** շտապելու անհրաժեշտություն չկա, այնպես էլ պետք չէ վախենալ **«Այնտեղ»** ընկնելուց:

Եթե դույզն իսկ հնարավորություն կա՝ պետք է մնալ Երկրի վրա, որպեսզի ինքնակատարելագործվելով նպաստել աշխարհի կատարելագործմանը, և գիտակցաբար իրեն նախապատրաստել «ԱՅՆՏԵՂԻ» լավագույն բախտի համար:

Եթե ներկայացված պատկերը ճշմարիտ է, ապա մարդկության համար բացվում են բարգավաճման և բարեկեցության ֆանտաստիկ հնարավորություններ: Ապրողների սերունդը գնացածների սերնդից կարող է ստանալ անգնահատելի փորձ, անգնահատելի գիտելիքներ: Ապրողների սերունդը կարող է տեղեկատվություն ստանալ անցյալի, ներկայի և ապագայի մասին: Միայն թե հաղթահարվի վախը մահվան անկատմամբ:

Սերգեյ ԲՈԺԻՉ

«Անդրշիրիմյան կյանքի պրակտիկան» անտիպ գրքից, որը գրվել է 1984 թ.

ՈՒԶՈՒՄ ԵՔ՝ ՀԱՎԱՏԱՑԵՔ...

ՄԵՐ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տպագրելով Ս. Բոժիչի գրքի այս հատվածը, խմբագրությունը հակված չէ հաստատել (կամ ժխտել) անդրշիրիմյան գոյության վարկածը: Բայց շատ կարևոր և օգտակար խորհուրդ կա գրքում, որն ապրողների համար է. այս կյանքում մի եղիր մարդասպան, նախանձոտ ու չար, եսասեր, անբան ու ծույլ, վախկոտ ու ժլատ, մի խոսքով՝ արատավոր...

Կարծում ենք այս մտքի հետ կհամաձայնեն ամենածայրահեղ մատերիալիստներն ու այս աշխարհի եզակիության կողմնակիցները:

Հեռախոս՝ 224426 ՓՈՔՐԻԿ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ջո՞ւր ենք ծախում, չեղած ջո՞ւր

— Ալո, 22-44-26-ն է:

— Այո, այո՛, «Նպատակի» խմբագրությունը լսում է ձեզ:

— Շատ հաճելի է: Նախ երևի պիտի ներկայանամ. Վաղինակ Մաշուրյան, մասնագիտությամբ ինժեներ-մեխանիկ եմ:

— Համարենք, որ՝ մեր հեռակա ծանոթությունը կայացավ: Եվ այսպես, պարոն Մաշուրյան, ինչո՞վ կարող է օգտակար լինել ձեզ «Նպատակի» խմբագրությունը:

— Գիտե՞ք, ես ձեր քերթի մշտական ընթերցողներից եմ և ինձ դուր է գալիս, երբ դուք ժամանակ առ ժամանակ անդրադառնում եք արտաքուստ մանրուք թվացող, բայց բատ էության շատ կարևոր հարցերի և խնդիրների: Միայն թե...

— Շնորհակալություն, պարոն Մաշուրյան: Իսկ հիմա բացատրեք, թե ինչին է վերաբերում «միայն թե» վերապահումը:

— Դուք մի նեզացեք, խնդրում եմ: Ասելիքս այն է, որ դուք իսկապես կարևոր և ճշմարիտ հարցեր եք բարձրացնում, սակայն, ինչպես ասում են՝ դուք ասում եք, դուք լսում: Հիմա դուք կփորձեք ինձ առարկել, սակայն մի ընդհատեք, խնդրեմ, որովհետև փաստեր՝ որքան ուզեք: Հենց վերջերս դուք հրապարակեցիք Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի շատ հեղինակավոր հանձնաժողովի հայտարարությունը բյուջեական քանդարար «ռեֆորմների» վերաբերյալ: Ե՞վ գնահատականներն էին ճշմարիտ, և՛ հետևությունները ու եզրակացությունը: Այդ փաստաթուղթը ստորագրել էին մեծահամբավ գիտնականներ և անվիճելի հեղինակություններ: Ըստ էության, դա գիտությունների ակադեմիայի կարծիքն էր: Եվ ի՞նչ, պարոն Բյեյանը դրան պատասխանեց, որ «մի քանի գիտնականների կարծիքն իր համար նշանակություն չունի»: Եվ որպես դրա ապացույց՝ շարունակում է հայ երեխաներին մանկուրտ դարձնելու իր ազգադավ «առաքելությունը»: Իսկ ակադեմիան առայժմ լռում է և ամենակարևորը՝ չի գայրանում... Թերթն անպայման առարկություն ունի սրան: Եվ քանի որ ես գիտեմ, թե դուք ինչ կպատասխանեք ինձ, խնդրում եմ թույլ տվեք շարունակել:

Շատ վաղուց չէր, որ ձեր թերթն անդրադարձավ խմելու ջրի նոր գներին: Ե՞վ այդ որոշման հիմնավոր ցախջախումն էր ճիշտ, և՛, մանավանդ, գայրույթը: Սակայն ինչպես ասում են՝ ասողին լսող է պետք: Գուցե այս անգամ լսեն:

Մեր անկախ հանրապետությունում հիմա շատ ու շատ ճշմարիտ բաներ են ասվում և գրվում, բայց բանի տեղ դնող չկա: Դուք ու երևի նաև շատ ու շատ ուրիշներ միանգամայն ճիշտ բացատրում եք, որ երևանցին օրական մեկ խորանարդ մետր ջուր չի սպառում և չի կարող սպառել, որովհետև պարզապես ի վիճակի չէ: Նախ և առաջ ծորակներից ջուր չի հոսում: Եվ եթե հոսի էլ, նա օրը մի քանի անգամ, ինչպես վայել է քաղաքակիրթ մարդուն, լոգանք չի ընդունում, քանի որ գազ ու տաքացուցիչ չունի: Էլ չեմ խոսում այն մասին, որ բազմաթիվ շենքեր ու թաղամասեր ոչ միայն օրերով ու շաբաթներով, այլև նույնիսկ ամիսներով ու տարիներով ջուր չունեն: Հիմա ինձ բացատրեք, թե ասենք տասներորդ հարկում ապրող 4 կամ 5 հոգուց բաղկացած ընտանիքը տեխնիկական ի՞նչ հնարներով կկարողանա 5 խորանարդ մետր, այսինքն՝ 5 տոննա ջուր, հասցնել իր բնակարանը և հասցնելուց հետո որտե՞ղ է տեղավորելու ջրի այդ ահռելի ծավալը: Ֆանտաստիկ և անհեթեթ հարցադրո՞ւմ է: Անպայմա՛ն: Սակայն, դժբախտաբար, ծիծաղելի չէ: Որքան էլ սա անիրական է ու խելքից-մտքից դուրս, սակայն պետական այրերը սուն հաշվարկը համարել են ռեալ և սահմանել են խմելու ջրի գներ: Իսկ բնակշահագործման գրասենյակներն էլ ամենայն ֆանատիզմով մարդկանցից գանձում են այդ գումարը՝ լուրաքանչյուր անհատից ամիսը մոտ 80 դրամ:

Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ ջրի համար գանձվող այս գումարը, միացրած կոմունալ մյուս ծախսերի հետ, խիստ անհամապատասխան է ծայրահեղ աղքատության հասած մեր հայրենակիցների գրպանին (թեև սա հուժ էական հարց է), և երևույթը մեկնաբանենք «շուկայական» հարաբերությունների անդրադարձով:

Մանկահասակ երեխան էլ գիտի, որ շուկայի գլխավոր և պարտադիր սկզբունքը այն է, որ մեկը վաճառում է, մյուսը՝ գնում: Այսինքն՝ իմ վճարածի դիմաց ձեռք եմ բերում ինչ-որ բան: Եվ քանի որ մեր խոսքը վերաբերում է ջրին, ապա իմ վճարածի դիմաց ես պիտի ստանամ մեկ տոննա ջուր (մեկ շնչի հաշվով): Այսինքն, նրանք, որ մշտապես ջուր ունեն ծորակներում, թող որքան կուզեն բողոքեն թանկությունից, բայց վճարեն: Իսկ ինչո՞ւ վճարեն նրանք, որոնց բնակարանների ծորակներն իրենք էլ են մոռացել, թե ինչ նպատակի են ծառայում: Եվ իսկապես, այդ ո՞ր տխմարն է շուկայում վճարում և տեղը ոչինչ չի ստանում: Այսպիսիք, իհարկե, չկան, սակայն մեր բարեխնամ կառավարողները այնքան են «հմտացել» շուկայական հարաբերություններում, որ արդեն տխմարի տեղ են դրել սեփական բնակչությանը ու վաճառում են չեղած ապրանքը:

Մեր պետական այրերը վերջին ժամանակներս շատ-շատ են սկսել առաջնորդվել միջազգային չափանիշներով: Եվ եթե ֆրանսիացին օրը օգտագործում է մեկ տոննա ջուր, ուրեմն հայ մարդն էլ պիտի այդքան ջուր օգտագործի, ինչո՞վ է պակաս ֆրանսիացուց: Բայց, ախր, պարոնայք իշխանավորներ, հայ մարդն ուզի էլ՝ հնարավորություն չունի այդքան ջուր օգտագործել: Իսկ որ ամենակարևորն է, այդ ջուր-ապրանքը տասնյակ հազարավոր մարդկանց համար պարզապես երազ է, չկա: Ուրեմն ո՞ւր մնաց շուկայական կամ ընդհանրապես մարդկային տրամաբանությունը: Թե՞ արդեն տրամաբանությունը դառնում է մերժելի անախրոնիզմ:

Խորհրդարանական մեր գիտնականներից մեկը ժամանակին ապացուցում էր, որ Հայաստանը ջերմուկ ծախելով կպահի իրեն: Հետո նա հաստատում էր, որ մեր հողը կպահի տասը միլիոն մարդ: Ջիրականացան պատգամավոր-գիտնականի հուսավառ հավաստիացումները: Եվ երևի գրությունը փրկելու համար հիմա ժողովրդին ջերմուկի փոխարեն ջուր են ծախում, չեղած ջուրը: Հաշվեք, թե ամիսը որքան գումար կլինի 3,5 միլիոն անգամ 80 դրամը: Ի՞նչ անուն տալ «շուկայական» այս աճպարարությանը... ի՞նչ է, դուք ինձ չե՞ք լսում...

— Ոչ, ինչո՞ւ, ամենայն ուշադրությամբ լսում եմ:

— Հապա ինչո՞ւ եք լռում:

— Շփոթված եմ, կարծես մեր ծորակներում ջրի ձայն եմ լսում...

— Պարզ է, ցտեսություն...

ՀՈՒՄՈՐ

Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ համակարգի աշխատողների կյանքի անվտանգությունը, հայտնում ենք, որ այսուհետ վերելակ նստելուց առաջ պարզեք՝ ներկա՞ է, թե՞ ոչ վերելակաբան տիկին Օֆիկը՝ մետաղյա ձողիկի հետ: Հակառակ դեպքում մի քանի ժամ դուք կարող եք մնալ կամ վերելակի փակ դռան առաջ, կամ նույնքան ժամ՝ փակ վերելակի մեջ. բացառված չէ, որ դուք հետո ստիպված լինեք դուրս սողոսկել երկու հարկի մեջտեղում կանգնած վերելակից, որը խիստ վտանգավոր է:

Մեր խորհուրդը հաշվի չառնողներին հայտնում ենք, որ ձեր բոլոր

— բողոքները

— խնդրանքները

— օգնություն հայցող կանչերը

— աղիողորմ ճիչերը

— սրտային տագնապները

— ձեր հիվանդությունների բլարկումը

— շնչահեղձ լինելու սրտաճաք աղաղակները

— ուշագնացության փորձերը

հաշվի չեն առնվի:

«ՆՊԱՏԱԿ»— ГАЗЕТА НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РА

"NPATAK" NEWSPAPER OF THE NATIONAL ACADEMY OF SCIENCES REPUBLIC OF ARMENIA

Տնօրեն՝ Լավրենտի ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ. Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 բ, Հեռախոս՝ 22-44-26: Թերթը տպագրվել է ՀՀ կառավարության «Պարբերական հրատարակչություն» հրատարակչությունում: Հասցեն՝ Արշակունյաց 2: Դասակ՝ 69285: Գրանցման վկայական 888: Ստորագրված է տպագրության 29.06.1995 թ.: